№ 279 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1909
ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 279

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 228.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԱՌԱՋԻԿԱՅ 1910 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ
(38-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 1 ամսվանը՝ 80 կ. և 20 կ. պօստի ծախք:

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ:

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և միևնոյն ժամանակ 40 կ. նամականիշ:

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով առեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեանը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ: Հին բաժանորդներից խնդրվում է կցել փոխադր. բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով:

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Հինգշաբթի, դեկտեմբերի 17-ին
Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան շինութեան մէջ
կը կայանայ
Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Օրակարգ.
1) Վարչութեան զեկուցումը.
2) Զեկուցում Ստ. Մալխասեանի՝ բամբակագործութիւնը Թիֆլիսի գաւառում.
3) Զեկուցում Գ. Ռայզմանի՝ հողմաշարժ մեքենաները գիւղատնտեսութեան մէջ.
4) Զեկուցում Ն. Գ. Տարասէնովի՝ բամբակագործ. կրեդիտը և նրա պատճառները:

Սկիզբը երեկոյեան ժամը 7-ին:
Կարող են ներկայ լինել նաև կողմնակի անձեր:
(Հ. Գ.) (առ.) 1346. 2—2

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
ՕՊԵՐԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ, Ա. ՑԵՐԵՆՎԱԼԴԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ
Այսօր 4-րդ անգամ նոր օպերա Թիֆլիսում
«ՏԱԻՍ»
Մասնակցում են՝ Վօլսկայա, Դէվօս-Սօբոլեվա, Նլագինա, Ֆերրարի, Դիմենտենկո, Կորշմարեով, Սօկոլսկի:
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին: Գները սովորական են:
Շաբաթ, դեկտեմբերի 19-ին—կոմպօզիտօր Վ. Ն. ԳԱՐՏԵՎԵԼԴԻ համերգը—«ՏԱԺԱՆԱԿՐԻ ԵՐԳԵՐԸ»: Մասնակցում են՝ Վիկչեմսկայա, Զուլգինա, Դէվօս-Սօբոլեվա, Վօլսկայա, Բօրիսենկո, Կօրշմարեով, Սօկոլսկի, Գալեցկի:
(առ.) 1350. 1—1

ՀԱՍՈՒՆԱՑԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ

Երկու խնդիրներ, որոնց լուծումը վաղուց քարոզվել և քարոզվում է ռուսահայ մամուլի մէջ, իբրև հասունացած խնդիրներ, գրաւել են այժմ և Թիւրքահայ մամուլի ուշադրութիւնը:

Առաջին խնդիրը՝ ձայների անարդար բաշխումն է կաթողիկոսական ընտրութեան ժամանակ, երբ Ռուսաստանի և Պարսկաստանի հայ ազգաբնակութիւնը, որ հաշւվում է մօտ մէկ և կէս միլիօն, ունի 8 ձայն (ութ թեմ), իսկ Թիւրքիայի հայ ազգաբնակութիւնը, որ հաշւվում է նոյնպէս մօտ մէկ և կէս կամ առ առաւելն 2 միլիօն, ունի 45 ձայն (քառասուն և հինգ թեմ):

Դրա հետևանքն այն է եղել միշտ, որ Թիւրքիայից եկած ընտրող պատգամաւորները իրանց ճնշող մեծամասնութեամբ խեղդել են ռուսահայ և պարսկահայ պատգամաւորների ձայնը և ընտրել են այն անձին, որին իրանք են ցանկացել:

Այդ դրութիւնը անարդար է, անհամապատասխան եկեղեցու և ազգի շահերին, հետևաբար սրբագրելի է:

Այդ դրութիւնը առեղծվել է այն ժամանակ, երբ, արդարև, հայութեան հոծ մեծամասնութիւնը գտնվում էր Թիւրքիայում:

Իրանք թիւրքահայերը այժմ զգում և խոստովանում են ձայների այդ անհաւասար բաշխման անարդարութիւնը և տրամադիր են, որ նոր կարգ ու կանոն սահմանվի կաթողիկոսական ընտրութիւնների մասին, և Ռուսաստանի հայութիւնը ունենայ իր թւին համեմատ ներկայացուցչութիւն:

Երկրորդ կարևոր և հասունացած խնդիրն այն մեծ անարդարութիւնն է, որ տիրում է թիւրքահայոց ազգային սահմանադրութեան մէջ, գաւառների հայ ժողովրդի ներկայացուցչութեան վերաբերմամբ:

Թիւրքիայի հայութեան ներկայացուցիչը և նրա գործերի կենտրոնական ղեկավարը հանդիսանում է Կ. Պօլսի ազգային երեսփոխանական ժողովը:

Արդ՝ այդ ժողովը բաղկացած է 140 երեսփոխաններից, որոնց հինգեօթերորդ մասը, ուրեմն 100 երեսփոխան, ընտրում է Կ. Պօլիսը, իսկ մնացած 40-ը միայն գաւառները: Պօլսի հայ ժողովուրդը տալիս է 100, իսկ ամբողջ Թիւրքիայի հայութիւնը 40 ներկայացուցիչ: Եւ եթէ ի նկատի ունենանք, որ այդ 40 երեսփոխաններն էլ ամբողջովին ուղղակի գաւառներից չեն գալիս, այլ նրանց մի մասը դարձեալ պօլսեցիներ կամ Պօլսում ապրող գաւառացիներ են, մենք կը տեսնենք, թէ, իսկապէս, ազգային երեսփոխանական ժողովը արտայայտիչ և ներկայացուցիչ է Պօլսի հայ ազգաբնակութեան և ոչ Թիւրքիայի ամբողջ հայ ժողովրդի:

Դեռ հանգուցեալ Գրիգոր Արծրունին քարոզում էր, որ թիւրքահայոց ազգային երեսփոխանական ժողովը պէտք է փոխադրել Երզրում, Հայաստանի սիրտը: Եթէ այդ անհնարին է, գոնէ պէտք է աշխատել, որ ազգային երեսփոխանական ժողովը լինի իսկապէս հայ ժողովրդի ներկայացուցիչ, որ Պօլիսը ունենայ առ առաւելն 10 երեսփոխան, իսկ մնացեալ 130-ը լինեն թեմերից:

Ահա այդ երկու անարդարութիւնները սրբագրելու և ուղղելու համար այսօր ձայն է բարձրացրել և թիւրքահայ մամուլը:

Ուստի և մենք մեծ հաճութեամբ ողջունում ենք Զմիւռնիայի «Դաշինք» թերթի մէջ տպված՝ Միքայէլ Նաթանեանի երկու առաջնորդող յօդուածները այդ հասունացած խնդիրների մասին և ձայնակցում ենք նրան, թէ սրբագրելով այդ երկու սխալները՝ մենք աւելի ամրապնդած կը լինենք և սեղմած ազգային կապը և բարձրացրած ազգային կենտրոնական իշխանութեան հմայքն ու հեղինակութիւնը:

Հ. Առաքելեան

ՄԵԾ ԻՇԽԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹՈՎ

Բերլին, 15 դեկտեմբերի

Վիլհելմ կայսրի կողմից Մեծ Իշխանի թաղմանը ներկայ կը լինի պրինց Ֆրիդրիխ-Լէօպոլդը: (Հ. Գ.)

—

Հանգուցեալ Մեծ Իշխան Միխայէլ Նիկօլայեվիչը իր կտակի մէջ խնդրում է պսակներ չը դնել, այլ նրանց փոխարէն թոշակաւորներ հաստատել:

—

Կովկասի Փոխարքայի կողմից Մեծ Իշխան Միխայէլ Նիկօլայեվիչի թաղմանը ներկայ լինելու համար ընտրված է Գանձակի նահանգական վարչութեան խորհրդական Ասանիձէն, որ Մեծ Իշխանի փոխարքայութեան ժամանակ ծառայութեան մտած պաշտօնեաներից ամենաաւագագոյնն է:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարիզ, 15 դեկտեմբերի

Ձերբակալվեց Գիլէվիչը: (Հ. Գ.)

—

Պարիզ, 15 դեկտեմբերի

Լէշտուկօվի նրբափողոցում կատարված սպանութեան հեղինակ Անդրէյ Գիլէվիչը վերջերս փոխանակագրով Պետերբուրգից ստացաւ 8000 րուբլի իր ձեռքով սպանված ուսանող-տեխնօլօգ Պօդլուցկիի անունով: Այսօր Գիլէվիչը բանկ եկաւ ստանալու ուրիշ փոխանակագրով 400 րուբլի և ձերբակալվեց ռուս ոստիկանութեան գործակալի ձեռքով: Գիլէվիչը դիմափոխված (Հ. Գ.)

—

Թիֆլիս, 15 դեկտեմբերի

Արտակարգ պահպանողական դրութիւնը Բագուի քաղաքապետութեան սահմաններում երկարում է մինչև 1910 թւի յուլիսի 6-ը: (Հ. Գ.)

—

Բերլին, 15 դեկտեմբերի

«Կեօլնիշէ Ցայտունգը» կիսապաշտօնապէս հաղորդում է, որ յիրաւի ցանկութիւն կայ բարելաւել յարաբերութիւնները Անգլիայի հետ, բայց և այնպէս մինչև օրս որևէ համաձայնութիւն չէ կապված նաւատորմի հարցի վերաբերութեամբ: Սխալ է այն տեղեկութիւնը՝ թէ Գերմանիան մտադիր է յետ կանգնել օրէնքով սահմանված նաւաշինական պլանից: (Հ. Գ.)

—

Պարիզ, 15 դեկտեմբերի

Պատգամաւորների պալատ: Պատասխանելով արտաքին քաղաքականութեան մասին արված հարցապնդման, Պիշօնը յայտարարեց, որ Ֆրանսիան իր համաձայնութիւններով և բարեկամական դաշնակցութիւններով նպատակ ունի նպաստել ժողովուրդների համաձայնութեան պահպանմանը: Ֆրանսիայի յարաբերութիւնները բոլոր կառավարութիւնների հետ բարեկամական են. Պարիզը և Պետերբուրգը երբեք այնպէս սերտ կերպով կապված չեն եղել միմեանց հետ, ինչպէս այժմ է: Մինիստրը յիշեցրեց կայսրի և նախագահի տեսակցութիւնների, նաև այն այցելութիւնների մասին, որ փոխանակեցին Ֆրանսիայի և Ռուսաստանի մինիստրները: «Անգլօ-ռուսական համաձայնութիւնը,— ասաց Պիշօնը,—չափազանց մեծ նշանակութեան մի ֆակտոր է»:

Անցնելով Բալկաններում տիրող դրութեան, նա ասաց, որ հարկաւոր է երախտագիտօրէն յիշատակել այն միջնորդութեան մասին, որ յանձն առաւ Ռուսաստանը Թիւրքիայի և Բօլգարիայի միջև:

Կրետական հարցի վերաբերութեամբ Պիշօնը ասաց, որ կը գայ ժամանակ, երբ 6 շահագրգռված պետութիւնները կը ձեռնարկեն կանոնաւորելու Կրետէի կառավարութիւնը:

Վերջում նա ընդգծեց, թէ Ֆրանսիայի արտաքին քաղաքականութիւնը համապատասխանում է իր շահերին և պահպանում է խաղաղութիւնը: «Ազգային ինքնապաշտպանութեան հոգսը չի ստիպի մեզ մոռանալ հանրապետութեան վրա ընկած մարդասիրական պարտականութիւնը»: Ապա միաձայն որոշվեց վստահութիւն յայտնել կառավարութեանը: (Հ. Գ.)

—

Նիւ-Եօրկ, 15 դեկտեմբերի

Նիւ-Եօրկի շրջակայքում ձիւնախառն մրրկին զոհ գնացին 18 մարդ: Բօստօնի բարձունքին խորտակվեց մի նաւ. 12 նաւաստիները համարվում են կորած: (Հ. Գ.)

—

Բուդապեշտ, 15 դեկտեմբերի

Պատգամաւորների պալատ: Անկուսակցական պատգամաւոր Բարտը հարց է տալիս կառավարութեանը՝ առանձին անդամների վրա բարձված մեղադրանքների մասին:

Վեկէրլէն պատասխանեց, որ կառավարութիւնը պատգամաւորների պալատին կը ներկայացնէ բոլոր փաստաթղթերը:

Միապետի անունով ուղերձ կազմելու համար մասնաժողով ընտրվելուց յետոյ, Վեկէրլէն յայտնեց, որ ժամանակաւոր բիւջէն ներկայացնելու օրից դրութիւնը զգալի չափով փոխվեց, որովհետև կառավարութիւնը պարտութիւն կրեց ձայնատւութեան ժամանակ: Նիստը յետաձգվեց: (Հ. Գ.)

—

Կեօլն, 15 դեկտեմբերի

«Կ. Ցայտ.»-ին հեռագրում են Շանխայից, որ պրինց-խնամակալի կեանքի դէմ կատարված մահափորձի ժամանակ վիրաւորվել է ոչ թէ պրինցը, այլ Մանջուրիայի զօրապետ Չէնդինան, որ սխալմամբ ընդունվել է պրինցի տեղ: Ցանցագործը տուեց չափազանց հակասական ցուցմունքներ: Պարզվեց, որ նա մանջուրական զինուոր է: (Հ. Գ.)

—

Բուխարեստ, 15 դեկտեմբերի

Մինիստր - նախագահ Բրատիանօն ստացաւ երկու շաբաթ արձակուրդ: Պալատը նախագահ ընտրեց փոխ-նախագահ Միսիրին: (Հ. Գ.)

—

Բուդապեշտ, 15 դեկտեմբերի

Ունգարական պատգամաւորների պալատի նախկին նախագահ Իւստը դեկտեմբերի 17-ին կանչվել է կայսրի մօտ Վիէննա: (Հ. Գ.)

—

Ֆրանսիական բարոյական և քաղաքական գիտութիւնների ակադէմիան իր արտասահմանեան անդամների թւում ընտրեց Միացեալ-Նահանգների նախկին նախագահ Րուզվելտին շվէյցարացի փիլիսօփայ հանգուցեալ Էրնէստ Նավիլի տեղ, որպէս Ամերիկայի պատմութեան վերաբերեալ մի քանի գրուածքների հեղինակի: Ակադէմիայի ներկայ եղող 28 անդամներից 25-ը՝ ձայն տուին ընտրութեան օգտին, երկուսը դէմ և մէկը ձեռնպահ մնաց: Ֆրանսիական լրագիրները ողջունում են Րուզվելտի ընտրութիւնը: «Temps» լրագիրը այդ առիթով մի մեծ առաջնորդող յօդուած տպեց, որի մէջ կանգ է առնում Միացեալ-Նահանգների նախկին նախագահի բարոյական յատկութիւնների վրա, որոնք դարձնում են նրան ժամանակի նշանաւորագոյն մարդկանցից մէկը: Լրագիրը ընդգծում է նրա բարոյական եռանդը, անխոնջ գործելու ընդունակութիւնը և առողջ լաւատեսութիւնը, որը ստիպում է նրան հաւատալ, որ մարդկութիւնը անընդհատ առաջադիմում է և կանգնած է նոր, աւելի ևս փայլուն յաղթանակների ճանապարհի վրա:

—

Պ ե տ ե ր բ ու ր գ.—Դումայի կուլուարներում խօսում են, թէ իբր յունվարից գեներալ Դումբաձէն նշանակվելու է Պետերբուրգի քաղաքապետ:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը վճռել է հաստատել բարձր կանանց պօստ-հեռագրական դասընթացքներ լայն ծրագրով: Ընդունվելու են կանանց գիմնազիաները աւարտողները:

Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը մտադիր է հաստատել կանանց բարձր երկաթուղային դասընթացքներ:

Ռուսական և անգլիական կառավարութիւնների համաձայնութեամբ՝ ռուս զօրքերը յետ չեն կանչվի Պարսկաստանից, մինչև որ երկրում լիակատար հանգստութիւն չը տիրէ:

Դումայական մասնաժողովը ձայների ճնշող մեծամասնութեամբ մերժեց գումարներ յատկացնել նոր զրահանաւեր կառուցանելու համար:

Պտտող լուրերի համաձայն, բացի Մոսկվայի 67 խնամակալներից, սենատոր Գարինի պահանջով դատարանի ձեռքն են յանձնվելու նաև գեներալներ Րօստովսկին և Պօլեակովը: („Б.“)

—

Նորերս վախճանված՝ բելգիական թագաւոր Լէօպոլդ II-ը հետևեալ կտակն է թողել:

«Ես ժառանգեցի իմ ծնողներից տասն և հինգ միլիօն: Այդ տասն և հինգ միլիօնը ես պահպանում էի երկիւղածութեամբ ամեն տեսակ փորձանքներից:

«Ես ուրիշ ոչինչ չունեմ:

«Իմ մահից յետոյ այդ տասն և հինգ միլիօնը պէտք է իմ ժառանգների օրինական սեփականութիւն դառնայ և պէտք է իմ կտակակատարը յանձնէ նրանց նրա համար, որ իմ ժառանգները բաժանեն իրանց մէջ:

«Ես ցանկանում եմ մեռնել կաթօլիկ կրօնի մէջ, որը իմ դաւանութիւնն է:

«Ես չեմ ցանկանում, որ ինձ անդամահատեն:

«Ես կամենում եմ թաղվել վաղ առաւօտեան առանց որևէ հանդիսաւորութեան: Բացի իմ եղբօր որդի Ալբէրտից և իմ տնից, ես արգելում եմ հետևել իմ աճիւնին:

«Պաշտպանիր, Աստուած, իմ Բէլգիան և ըստ քո բարութեան գթասիրտ եղիր դէպի ինձ»:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թեհրան, 15 դեկտեմբերի

Թեհրան կանչված Սամսամ-ուս-Սալթանէի փոխարէն Սպահանի նահանգապետ նշանակվեց բախտիարների խան Սերդար-Աշջէնը:

Մահափորձ կատարվեց մուշտէիդ շէյխ-Մուհամմէդ-Րիզա-Ղումի կեանքի դէմ: Շէյխը վիրաւորված է թեթև: Ցանցաւորը փախաւ: (Հ. Գ.)

—

Թ ե հ ր ա ն.—Գաւառում մեծ անհանգստութիւն է տիրում: Բացի աւազակութեամբ զբաղվող թափառականներից, ասպատակութիւններ է անում նաև Րահիմխանի որդին, որ գրաւել է Բուշիրի ճանապարհը մինչև Շիրազ: Արդաբիլի ճանապարհին նոյնպէս հանգիստ չէ: Ղումի մօտերը վաչկատուն բախտիարները կողոպտել են պօստը և ձեռք են ձգել խոշոր գումար:

Երէկ մէջլիսը քննեց հայերի պահանջը՝ երեք հայ պատգամաւորներ ունենալու մասին: Պարլամենտական մասնաժողովը և շատ պատգամաւորներ կարծիք յայտնեցին, թէ պէտք է բաւարարութիւն տալ հայերի պահանջին:

Բուշիրի մօտերը կառավարական զօրքերը խոշոր պարտութիւն են կրել: Կան շատ սպանվածներ և վիրաւորվածներ: Մէջլիսի արտակարգ նիստում որոշվեց ուղարկել մի քանի զօրախմբեր՝ կարգուկանոնը վերահաստատելու համար: Գլխաւոր հրամանատարութիւնը յանձնվելու է Եփրեմին:

Մտադրվում է ցէնզուրա նշանակել պարբերական հրատարակութիւնների վրա:

Արդաբիլից հեռագրում են, որ մուջահիդների պետ նշանակվել է Եփրեմը: Սերաբում շարժում է սկսվել շահսէվանների մէջ: Սպասվում է ընդհարում: Նահանգապետը մեկնեց Սերաբ ընդհարման առաջն առնելու: («Б.»)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Թիւրքաց զինուորական մինիստրութեան մէջ շատ են յուզված Հայաստանից ստացված վերջին տեղեկութիւններից: Համաձայն այդ տեղեկութիւնների, թիւրքաց զօրքերը Հայաստանում վերին աստիճանի անմխիթար վիճակի մէջ են. զինուորները չունեն ամենաանհրաժեշտ զգեստը և նրանց մէջ խուլ բողոք է նկատվում, որը կարող է փոխվել իսկական ապստամբութեան: Զինուորական մինիստրութեան ստացած տեղեկութիւնները, չը նայած այն հանգամանքին, որ նրանց գաղտնի էին պահում, այժմ դարձել են ընդհանուրի սեփականութիւն և Կ. Պօլսի մամուլը հարց է յարուցանում, որպէս զի յօգուտ Հայաստանի թիւրք զինուորների բացվի հասարակական հանգանակութիւն: («Н. В.»)

Թիւրքաց ֆինանսների մինիստր Ջաւիդ պատրաստւում է ճանապարհորդութիւն կատարել Բալկանեան թերակղզում, այնպէս որ նա կայցելի Բուխարէստ, Բելգրադ և Սօֆիա քաղաքները։ Այդ առիթով Կ. Պօլսում լուրեր տարածվեցին, որ Ջաւիդի ճանապարհորդութիւնը նպատակ ունի բանակցութիւններ վարել Բալկանեան պետութիւնների դաշնակցութիւն կազմելու հարցի մասին։ «Berl. Tag.» լրագրի թղթակիցը հաղորդում է, սակայն, որ Բ. Դրան մօտ կանգնած շրջաններում հերքում են Ջաւիդի ճանապարհորդութեանը վերագրվող այդ նպատակը։ «Թանին» լրագրի խմբագիր Հուսէին Ջաւիդը կուղեկցէ մինիստրին իր ճանապարհորդութեան ընթացքում։

ՄԵԾԱԳՈՅՆ ՄԱՐԴՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մարդկային կեանքի տարեգրութիւնների մէջ շատ հազուագիւտ են այնպիսի պետական և հասարակական գործիչներ, որոնք լինելով իսկական հայրենասէրներ՝ միևնոյն ժամանակ իրանց ընդհանուր մարդասիրական ձգտումներով և դէպի տանջվող ու տառապող մարդկութիւնը ունեցած համակրութեամբ և բարերար գործունէութեամբ ի նպաստ «թշուառների և ճնշեալների» այնքան վեհ բարձրութեան հասցրած լինէին իրանց հայրենասիրութիւնը և մարդկային կոչումը։

Եւ ահա ճիշդ 100 տարի սրանից առաջ, 1809 թ. դեկտ. 17/29-ին, Անգլիայում ծնվեց այդպիսի մի անձն։ Դա աշխարհահռչակ անգլիական պետական գործիչ և համայն մարդկութեան բարերար Վիլեամ Գլադստոնն է, որ վախճանվեց 1898 թ. մայիսի 6-ին 89 տարեկան հասակում։

Այդ մեծագոյն մարդուն շատ մեծ պարտք ունի իր սեփական ազգը՝ անգլիացին։ Ոչ նուազ երախտագիտական պարտք ունեն հատուցանելու նրա նուիրական յիշատակին և ուրիշ ազգութիւնները, մանաւանդ ճնշված, հարստահարված, բայց նրա շնորհիւ ազատագրված փոքր ազգութիւնները, ինչպէս յոյնը, բօլգարը, բօէրը։ Երախտագիտական անհուն պարտք ունի հատուցանելու և հայ ժողովուրդը, որի մարդկային նուիրական իրաւունքների ախոյեան և պաշտպան կանգնեց նա, թէև, ի մեծ ցաւ իր սրտի, չը տեսաւ այդ ժողովրդի ազատագրութիւնը։

Այսօր, երբ քաղաքակիրթ Անգլիան տօնում է իր մեծագոյն զաւակի ծննդեան 100-ամեակը, գանք թարմացնելու մեր յիշողութեան մէջ այն գեղեցիկ բնորոշումը, որ 1898 թ. նրա մահվան առիթով տուեց մեզ մեր նշանաւոր հրապարակախօսներից մինը՝ Գր. Ջանշեանը*)։

«Պատմութեան մէջ,—ասում է Գ. Ջանշեան,—հազուագիւտ են այնպիսի անուններ, որոնց կրողները մարդկային գոյութեան կարճ շրջանում ցոյց տային քաղաքական-բարոյական հայեացքների այնպիսի անընդհատ զարգացման և կատարելագործութեան օրինակ, ինչպէս մեծ-ֆինանսիստ, էմանցիպատոր և հումանիստ Գլադստոնի աւելի քան յիսնամեայ առաջադիմական քաղաքական աշխարհահայեացքը։ Պէտք է դիմել Պերիկլ[illegible]ներին, որ կեանքի [illegible] դարձաւ դեմօկրատիայի համոզված բարեկամ, գտնելու համար Գլադստոնին արժանի օրինակ։ Սկսելով իր քաղաքական ասպարէզը իբրև աննկուն տօրի, պաշտպան կառավարիչ շրջանների և պետական եկեղեցու բացարձակ իրաւունքների և նոյն իսկ ստրկութեան, նա յետոյ իր քաղաքականութեան հիմնական նպատակը դարձրեց մասսաների հարկային ծանրութեան թեթևացումը (հացի մաքսի ջնջումը), նրան քաղաքական իրաւունքների պարգևումը, եկեղեցական ճնշումից ազատութիւնը և հարստահարեալ ազգութիւնների ազատագրութիւնը, սկսեալ իտալացիներից մինչև իրլանդացիները և թիւրքական րայաները։

«Տանջվող և իրաւազուրկ ազգերի գործին անկեղծ, անշահասէր ծառայումը, անսահման հաւատը ազատութեան բարիքի մասին, միջազգային իրաւունքի շրջանում ոյժի և նիւթական շահի փոխարէն բարոյական պարտքի քարոզը—դրանք էին այն հիմնական սկզբունքները, որոնց հետևում էր XIX դարի մեծագոյն պետական հանճարը։

«Չը կան այնպիսի փոքրիկներ, թշուառներ, հալածեալներ, մոռացվածներ և ջարդվածներ, որոնց վրա ընկած չը լինէր այդ բազմասէր քրիստոնեայի կարեկից համակրութիւնը։ Իր կեանքի վերջին չորս տարին, իր վերջին ոյժերը նա տուեց, որպէս զի հրաւիրէ քրիստոնէական աշխարհի ուշադրութիւնը մի հնագոյն մարտիրոս-ժողովրդի, Թիւրքաց հայերի անվերջ մարտիրոսագրութեան վրա։

«Եւ եթէ հայերի անընդհատ, այրող արտասուքներից չորացած, հանգած աչքերը ընդունակ են դեռ տալ արտասուք, նա պէտք է պատկանէ այն մեծ մարդասէրին, որն եթէ չը կարողացաւ կանգնեցնել հայկական արեան վտակները, բայց գոնէ կանգնեցրեց «մեծ մարդասպանի» ձեռքը, որ արդէն բարձրացած էր՝ վերջնականապէս ջնջելու այն ազգը, որին խնայել էր նոյնիսկ գազան Թամերլանը....։»

Հայկական դատին ի պաշտպանութիւն Գլադստոն հանդէս եկաւ հրապարակօրէն երկու մեծ միտինգների մէջ արտասանած իր ճառերով, մինը՝ 1895 թ. յուլիսի 26-ին Չեստէրում և միւսը 1896 թ. սեպտեմբերի 26-ին Լիվէրպուլում։ Այդ ճառերը մշտական կոթող կը մնան նրա արդարադատութեան և հայասիրութեան։

Առաջին ճառով բացատրելով Հայաստանում կատարված գազանութիւնները, անարգանքի սիւնին գամելով Թիւրքաց կառավարութիւնը և սուլթանին, պախարակելով մեծ պետութիւնների անարգ վարմունքը և բռնած դիրքը, նա վերջացրեց այսպէս.

«Պարոններ, ես պէտք է ասեմ ձեզ, որ մենք հասել ենք ճշմարիտ ճգնաժամային դրութեան։ Եւրոպական երեք մեծ կառավարութիւններ, որոնք կառավարում են 209 միլիօն հոգի ունեցող ազգաբնակութիւն, որ 8 կամ 10 անգամ գերակշռում է Թիւրքիայի ազգաբնակութիւնը,—կառավարութիւններ, որոնց միջոցները 20 անգամ աւելի է Թիւրքական կայսրութեան միջոցներից, որոնց ազդեցութիւնը և ոյժը 50 անգամ աւելի է Թիւրքիայի զօրութիւնից, վերցրել են իրանց վրա որոշ պարտաւորութիւններ եթէ նրանք կը նահանջեն սուլթանի և օսմանեան կառավարութեան ընդդիմադրութեան առաջ, նրանք կը խայտառակվեն ամբողջ աշխարհի աչքում։ Պարտականութեան բոլոր մօտիվները այդ դէպքում զուգադիպում են ինքնայարգման բոլոր մօտիվների հետ»։

Լսելով Գլադստօնի այս ճառը, ժողովը միաձայն ընդունեց հետևեալ որոշումը. «Ներկայ միտինգը արտայայտում է իր համոզմունքը, որ նորին մեծութեան կառավարութիւնը կօգտվէ ամբողջ ազգի սրտագին աջակցութեամբ, առանց կուսակցութիւնների խտրութեան, այն միջոցների վերաբերմամբ, որ նա ձեռք կառնէ՝ ապահովելու համար Թիւրքահայաստանի ազգաբնակութեան այնպիսի ռէֆօրմներ այդ երկրի կառավարութեան մէջ, որոնք հայթայթէին լուրջ երաշխաւորութիւններ բնակիչների կեանքի, պատւի, կրօնի և գոյքի համար և թէ գործունեայ նշանակութիւն կարող են ունենալ միայն այն ռէֆօրմները, որոնք կը գտնվեն Եւրոպայի մեծ պետութիւնների անխոնջ հսկողութեան ներքոյ»։

(Կը շարունակվի)

ՎԻԼԵԱՄ ԷՎԱՐՏ ԳԼԱԴՍՏՕՆ

(17 դեկտ. 1809 թ.—17 դեկտ. 1909 թ.).

Որքան և քիչ լինի մեր հայերիս ծանօթութիւնը արևմտեան քաղաքական կեանքի և գործիչների հետ, այնուամենայնիւ մի քանի անուններ քիչ թէ շատ յայտնի են դարձել մեր ժողովրդին. բաւական է յիշել ամերիկացի հանճարեղ քաղաքագէտ փիլիսոփայ Ֆրանքլինին, ֆրանսիացոց Նապօլէօններին՝ Ա. և Գ., գերմանացիների Բիսմարկին, իտալացոց Գարիբալդիին, անգլիացի լօրդ Բիկոնսֆիլդին և Գլադստոնին։

Բայց սխալված չենք լինի, եթէ [illegible] ժողովրդական [illegible] մէջ, ամենից սիրելի [illegible]արենք այն մարդը, որի ծննդեան 100-ամեակը այսօր տօնում է Անգլիան և բոլոր քաղաքակիրթ աշխարհը։ Գլադստոնը իր երկար քաղաքական գործունէութեան միջոցին երբէք չը ղեկավարվեց հակամարդասիրական սկզբունքներով, նման Բիսմարկի քարոզած «երկաթի և արեան քաղաքականութեան» ուսման։

Գլադստոնի կեանքը շատ ուսանելի է զանազան տեսակէտներից. գրել նրա կենսագրութիւնը կը նշանակէ պատմել Անգլիայի քաղաքական էվօլիւցիան XIX դարի երկրորդ կէսի ընթացքում, մի ահագին գործ, որին չեն կարող յատկացվել լրագրական սուղ էջերը։ Ուստի մենք կը տանք այդ նշանաւոր մարդու կենսագրութեան կմախքը, իսկ ինչ վերաբերում է նրա մասնակցութեանը՝ դժբաղդ «հայկական հարցին», դրա մասին ընթերցողին կը տրվի առանձին յօդուած։

I

Վիլեամ Էվարտ Գլադստոնը ծնվել է բուն Անգլիայում, ծովեզրեայ Լիվէրպուլում. բայց նրա ծնողները շօտլանդացիներ էին։ Նրա հայրը, Ջօն Գլադստոնը, շնորհիւ իր խելքի, տոկունութեան և առևտրական աչալրջութեան, Լօրրի յայտնի վաճառականական տան գործակատարից դարձաւ ընկերակից և ունէր մեծածաւալ առևտուր Ռուսաստանի, Վերստ-Ինդիայի և Ամերիկայի հետ։ Վերջինումս նա ձեռք բերաւ շաքարի տունկի համար հողեր և դարձաւ աչքի ընկնող ագարակատէր, ստրուկների աշխատանք գործադրող... Հարստութիւնը Ջօն Գլադստոնի առաջ բացեց համայնքների պալատի դուռը։ Որպէս քաղաքական գործիչ՝ նա չափաւոր պահպանողական էր երևելի Կաննինգի օրինակով. պաշտպանում էր Կաննինգին, բարեկամ էր նրան և նրա միջոցով ստացաւ ազնուականի կոչում. Գլադստոնները հնումն ազնուականներ են եղած, սակայն այդ կոչումը կորցրել էին աղքատութեան պատճառով։

Գլադստոնի մայրը մի կրթված, խելօք, դիւրազգաց և կրօնով լի կին էր։

Ծննդավայր Լիվէրպուլը այն ժամանակները նոյնպէս յայտնի էր որպէս մի կենդանի, վաճառաշահ քաղաք, նաւահանգիստ։

Փոքրիկ Գլադստոնը ուսումը սովորեց տանը՝ հոգևոր անձերից և 12 տարեկան հասակում մտաւ Իտօնի գիմնազիայի երրորդ դասարանը. այս գիմնազիայում կրթվում էին «ամենաազնիւների» որդիները։ Այստեղ բաւական անփոյթ էր տրված գիտութեան դասաւանդումը. անցնում էին բացառապէս հին լեզուները, այն էլ շատ թոյլ կերպով։ Ուսումնարանն ունէր պահպանողական ուղղութիւն և ուսուցիչների մեծամասնութիւնը հոգևորականներից էր։

Փոքրիկ Գլադստոնը, որ շատ գեղեցիկ էր սովորում, զբաղված իր ձեռագիր ամսագրի հրատարակութեամբ, հեռու մնաց ժամանակակից դպրոցի վնասակար ազդեցութիւնից, այն դպրոցի, որի բացասական կողմերը այնքան վառ գոյներով նկարագրել է Չարլզ Դիկկենսը իր վէպերից շատերում։ Այդ երախայրիք ամսագրի ուղղութեան մէջ կարելի էր նկատել Գլադստոնի ապագայ գործունէութեան սաղմը. հետաքրքրասիրութիւն դէպի Հոմերոսը—ապագայում Գլադստոնը հռչակվեց որպէս լաւ հոմերագէտ—դէպի աստուածաբանութիւն և քաղաքական հարցեր. առանձին երկրպագութեան արժանանում էր պահպանողական Կաննինգը։ Վերջացնելով Իտօնի ուսումնարանը և երկու տարի էլ առանձին պատրաստվելով—ապացոյց, թէ որքան գիտութիւն էր աւանդվում ժամանակակից գիմնազիայում—Գլադստոնը մտաւ Օկսֆորդի համալսարանը։

Լուսաւորութեան այս հնագարեան որրանում տիրում էր խիստ-պահպանողական-կղերական ուղղութիւն, մինչդեռ երկրի կեանքը արթնանում էր, ժողովուրդը ձևակերպում էր իր արդարացի պահանջները, որ քիչ-շատ չափով իրականացան 1832 թ. ռէֆօրմով, երբ ընտրողական նոր օրէնքը լայնացրեց ժողովրդի մասնակցութիւնը կառավարութեան մէջ։ «Օկսֆորդում անգլիկան եկեղեցին կուռքի տեղ էին պաշտում,—ասում է Գլադստոնի կենսագրողներից մէկը,—իսկ տիրող քաղաքական հաւատամքն էր, թէ Անգլիան իր հզօրութեամբ պարտական է լօրդերին և հոգևորականութեանը»։ Ուսանողները իրանց քաղաքական կլուբում ջերմ վիճաբանում էին քաղաքական հարցերի մասին և մեծամասնութիւնը թշնամաբար էր վերաբերվում ազատամիտ ուղղութեանը։ Ջերմ պահպանողական ուսանող Գլադստոնը այդ կլուբում շուտով գրաւեց աչքի ընկնող տեղ, դարձաւ շնորհալի նախագահ, և ուսանողների մեծամասնութիւնը նկատում էր նրան որպէս ապագայ մեծ պահպանողական ոյժ։

Օքսֆորդի ժառանգութիւն կղերական-պահպանողական ուղղութիւնը երկար մնաց Գլադստոնի մէջ։ Ապագայում, երբ կեանքը ցոյց տուեց այդ աշխարհահայեցողութեան իսկական արժէքը, նա հրաժարվեց նրանից. սակայն նրա մէջ առմիշտ մնաց անկեղծ աստուածասիրութիւն և հետաքրքրասիրութիւն դէպի աստուածաբանական հարցերը։

Օկսֆորդն էլ փայլուն [illegible] աւարտելուց [illegible] 22-ամեայ գրեթէ պատանի Գլադստոնը ընտրվեց որպէս համայնքների անդամ։

Պարլամենտական նոր ռէֆօրմը դեռ խիստ չէր վերացրել հզօր հողատէր-լօրդերի գերիշխանութիւնը. դեռ նրանց տրամադրութեան տակ կային «գրպանի» շրջաններ, որոնց մէջ այս կամ այն ցանկացած անձին ընտրել տալը հողատէրի կամքից էր կախված, ահա թէ ինչու այդ շրջանները կոչվում էին «գրպանի շրջաններ»։ Նիւկէստլի լօրդը իր որդուց լսելով մեծ գովեստներ պատանի Գլադստոնի մասին՝ նրան հրաւիրեց իր «գրպանի շրջաններից» մէկում (Նիւ-Եօրքում) քուէարկվել, որ և ընտրվեց, չը նայած թեկնածուի դաւանած պահպանողական ուղղութեանը. չը մոռանանք ասել, որ այն ժամանակ շատ սահմանափակ ընտրութիւնները ընդ նմին և բերանացի էին կատարվում, որ ի հարկէ վնաս էր տնտեսապէս կախում ունեցող խաւերի քաղաքական շահերին։

Ընտրողական ժողովներում պահպանողական Գլադստոնը խոստանում էր ընդդիմանալ «նորութիւնների ծարաւին», սակայն և նկատում էր, որ «ազատամիտների կրիտիկային պէտք պատասխանել ոչ կաշառքով կամ հալածանքով, այլ կրիտիկայով և սեփական սկզբունքներով։ Կառավարութիւնը և պարլամենտը անդուլ կերպով պէտք հոգան այն դասի մասին (բանւորների), որ զրկված է իր մասին մտածելու հնարաւորութիւնից։ Աշխատանքը պէտք ստանայ իր արդար և օրինաւոր վարձը, մի սկզբունք, որ ներկայումս մոռացված կամ ոտնակոխ է արված։ Վերջապէս կառավարողների պարտականութիւնը սուրբ է, և օրէնսդրական ժողովը, ինչպէս և ամեն անհատ, պէտք կեանքի մէջ իրականացնէ իր դաւանած բարձր մտքերը»։

Դժուար չէ այս քրիստոնէական-ասպետական վարդապետութեան աքիլլէսեան գարշապարը (թոյլ կողմը) գտնելը. կեանքը լայն մտքով վերցրած իղձերի, մտքերի պայքար չէ, այլ շահերի, ի հարկէ նրանց դասակարգային շահերի մտքով հասկանալով։ Դա գործնականապէս պէտք ըմբռնէր և մեծ պարլամենտական գործիչը, բայց դրա ժամանակը դեռ չէր հասել։

Պարլամենտում երիտասարդ պատգամաւորը ընդդէմ էր հանդիսանում հրէաներին քաղաքացիական իրաւունքներ տալուն, պաշտպանում էր «բարեխիղճ ստրկատէրերին» և ստրկատիրական սկզբունքները, կողմնակից էր նրանց, որոնք առաջարկում էին փակել անգլիական համալսարանի դռները օտարադաւանների առաջ, համաձայն էր, որ տիրող ազգութեան եկեղեցին (անգլիկանը) պետական գերիշխողը լինէր և այլն։ Պարլամենտում Գլադստոնը իր ճառերով աչքի է ընկնում. երևելի պատմաբան Մակօլէյը մարգարէանում էր, որ պահպանողականները ապագայում ունենալու են մի աստղ։ Մինիստրութեան գլուխ Ռօբերտ Պիլը հրաւիրում է Գլադստոնին մինիստրութեան կազմի մէջ, որպէս ֆինանսների մինիստրի օգնական։

Մի տարու չափ տևեց նրա այդ պաշտօնավարութիւնը, սակայն նա ցոյց տուեց գործի մէջ արտակարգ ընդունակութիւններ և եռանդ։ Երբ 1835 թւին տապալվեց Ռ. Պիլի դահլիճը և ղեկը ստացան ազատամիտները, Գլադստոնը, անցնելով օպօզիցիայի շարքը, շարունակում էր իր եռանդուն մասնակցութիւնը պարլամենտում։ Ազատամիտ մինիստրութեան առաջարկին՝ տալ պետական դրամական ապահովութիւն և օտարադաւանների ուսումնարաններին, ինչպէս պահվում էին անգլիկան եկեղեցու ուսումնարանները, Գլադստոնը վերաբերվեց ոչ միայն թշնամաբար, այլ հրատարակեց մինչև անգամ մի ստուար աշխատութիւն, որի մէջ այն միտքն էր արծարծում, թէ պետութիւնը մի մարմին է և մի խիղճ ունի, ուստի և չէ կարող օժանդակել այլ դաւանութիւնների ուսումնարաններին։

Գրական և քաղաքական աշխատանքներից մի քիչ հանգստանալու համար 1839 թւին Գլադստոնը ուղևորվում է Իտալիա և այստեղ նա ծանօթանում է մի ճանապարհորդող անգլիացու ընտանիքի հետ, որի աղջկայ հետ նա ամուսնանում է յետագայ տարին. Կատերինա Գլինը իբրև օժիտ բերում է իր հետ Հօվարդէնի կալուածքը, որին հռչակեց Գլադստոնը՝ ինչպէս Ֆերնէյը՝ Վօլտերը։

Յետագայ տարվանից սկսվում է Գլադստոնի կեանքի մի նշանաւոր շրջանը, որի մասին հետևեալ անգամ։

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԺ. ՄԻՍԱՔ ԱՐԱՄԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Սրտի մեծ կսկիծով իմացայ բժ. Մ. Արամեանի մահվան լուրը։ Ինչքան յիշողութիւններ զարթեցրեց իմ մէջ այդ անունը, քաղցր յիշողութիւններ մանկութեան անդառնալի օրերի։ Բաղդը ձգել էր ինձ Կովկասի խուլ անկիւններից մէկը, [illegible] պաշտօն էր կատարում հանգուցեալը։

Ծնողներս հրաւիրեցին նրան ինձ հայերէն դասեր տալու։ Բժիշկը համաձայնվեց և կարճ ժամանակում այնպէս գրաւեց իմ ուշադրութիւնը և սէրը դէպի մայրենի լեզուն ու գրականութիւնը, որ բաւական է ասել, թէ հազիւ 13 տարեկան՝ ես կարդացել էի արդէն մեր բոլոր հին և նոր գրողների երկերը։

Ամայի տեղ էինք ապրում, անապատ էր... ոչ բուսականութիւն, ոչ մարդկային բնակութիւն. բայց ինձ համար փոյթ չէր. ես ոգևորված էի իմ դասերով։

Յիշում եմ՝ ինչպէս մի ձմեռվայ օր ուսուցիչս եկաւ դասին շատ տխուր դէմքով։

— Ինչո՞ւ էք տխուր,—հարցրի ես անհանգիստ։

— Ի՞նչ ասեմ քեզ, դու երեխայ ես դեռ, չես հասկանայ։

Բայց նկատելով, որ այդ խօսքերն ինձ վշտացնում են, նա իսկոյն շտապեց բացատրել իր մտատանջութեան պատճառը։

Պարզվեց, որ Ծննդեան ու Մկրտութեան տօները մօտենալու վրա են, քահանայ է հրաւիրված մեզ մօտ, բայց մի քահանայով ժամերգութիւնը գլուխ չէր գալու, որովհետև ոչ սարկաւագ կար, ոչ էլ դպիր։

Պէտք է ասել, որ բժիշկը այդ ժամանակները մտադրութիւն ունէր ինքը քահանայ ձեռնադրվելու և, բնական է, եկեղեցական ծէսերին մեծ նշանակութիւն էր տալիս։ Ես ուշադրութեամբ լսում էի ուսուցչիս բացատրութիւնը. յանկարծ մեր հայեացքները հանդիպեցին իրար և միևնոյն միտքը ծագեց մեր գլխում։

Ես նոր էի սկսել գրաբարը, բայց եթէ աշխատէի...

— Եթէ ուզենաս կարող ես Դանիէլի գիրքը կարդալ,—գուշակեց նա իմ միտքը։

Այդքանը բաւական էր. ես ոգևորված սկսեցի սերտել Դանիէլի գիրքը և 2 շաբաթվայ ընթացքում բոլորովին վարժ կարդում էի գրաբարը։ Հասան տօները. տան սենեակներից մէկը յարմարեցրինք հանգամանքին, և հետաքրքրական էր տեսնել, թէ ինչպէս ուսուցիչն ու աշակերտուհին իրար կողքի կանգնած ժամերգութիւն էին կատարում։

Այդ օրվանից աւելի սերտ կապ հաստատվեց մեր մէջ, բայց ափսոս որ երկար չը տևեց։ Մենք շուտով հեռացանք այդ վայրերից և էլ չը վերադարձանք այնտեղ։ Նոյն տարին, ամառը, իմ տօնախմբութեան առիթով ես ստացայ մի ծրար հետևեալ գրութեամբ.

«Ընդունեցէք, գեղանիդ, այն ծրարը, որ այսօր իմ անունով ձեր սիրելի մայրը ձեզ կը նուիրէ. Ագաթանգեղոս, հայոց քրիստոնեայ դառնալու պատմութիւնը. Խորենացի, մեր անցեալ փառաց և անձնիշխանութեան պատմութիւնը։ Դրանց հետ և Անիի քաղաքի աւերակների ժողովածուն։ Ես հաւատում եմ, որ դուք, որ այնքան սիրով ու մտադրութեամբ մեր ազգային լեզուն ու պատմութիւնը սովորելու ջանք էք ունեցել, կը շարունակէք և այսուհետև միևնոյն կորովով ու ճիգով»։

Այո, սիրելի ուսուցիչ, ես արդարացրի քո հաւատը. քո աւանդութիւնը սուրբ մնաց ինձ համար. և այսօր, քո թարմ շիրիմի առաջ, խոնարհեցնում եմ գլուխս և շնորհակալութիւն եմ յայտնում քեզ, որ վառեցիր իմ սրտի մէջ սէր դէպի մայրենի լեզուն ու գրականութիւնը, որ ես կաշխատեմ կտակել նաև իմ զաւակներին։

Իշխանուհի Մ. Թումանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Դեկտեմբերի 15-ին, ցերեկվայ ժամը 2-ին պալատական եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց Պետերբուրգում վախճանված բարօն Նօլդէի համար։ Ներկայ էին Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկօվ իր կնոջ՝ կոմսուհի Ելիզավետա Անդրէևնայի հետ, Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական սենատոր Վատացին, շտաբի կառավարիչ գ.-լ. Գ. Բէրխման, խորհրդի անդամները, փոխ-դիւանապետները և դիւանատան անդամները, Փոխարքայի շքախումբը, տեղական բարձր հասարակութեան տիկիններից, զանազան քաղաքացիական հաստատութիւնների կառավարիչներ և շատ աղօթողներ։

◆ Կոմսուհի Վ. Դ. Վօրօնցօվա-Դաշկօվան յունվարի 26-ին Թիֆլիսի Արտիստական Ընկերութեան շինութեան մէջ կազմակերպում է բարեգործական երեկոյթ յօգուտ Կարմիր Խաչի Թիֆլիսի Նադէժդինսկի համայնքի։

◆ Ռուսաստանի հայ-կաթօլիկների ընդհանուր առաջնորդ և առաքելական կառավարիչ Տէր-Սարգիս վ. Տէր-Աբրահամեան վերադառնալով Պետերբուրգից կատարեց Թիֆլիսում իր պաշտօնական այցելութիւնները։ Թիֆլիսի նահանգապետին և Փոխարքայի դիւանատան դիրեկտոր Պետերսօնին այցելելուց յետոյ, դեկտեմբերի 15-ին, երեքշաբթի օրը Տէր-Սարգիս վարդապետ՝ ընկերակցութեամբ Ա. Սարուխանեանի, ներկայացաւ Փոխարքայի օգնական սենատոր Ե. Ա. Վատացիին։ Մօտ կէս ժամ տևող նրանց խօսակցութիւնը վերաբերում էր հայ-կաթօլիկների նորահաստատ թեմի անմիջական պէտքերին, իսկ երէկ, չորեքշաբթի, ժամը 12-ին, Տէր-Աբրահամեան վարդապետ և Ա. Սարուխանեան ընդունվեցին Փոխարքայից առանձին ունկնդրութեան։ Ընդունելութիւնը թէ Փոխարքայի և թէ սենատոր Վատացիի կողմից սիրալիր էր և մեծ յոյս կայ, թէ շուտով կիրականանան հայ-կաթօլիկների հոգևոր կառավարութեան անհրաժեշտ պէտքերը։

◆ «Кавказъ»-ը հաղորդում է, որ 1, 2, 3, 4, 7, 10, 14, 15, 25, 50 և 70 կոպէկանոց պօստային հին նամականիշների գործածութեան վերջնական ժամանակամիջոցը երկարում է մինչև 1910 թ. մայիսի 1-ը։

◆ Մեզ հաղորդում են, որ «Արօր» ամսագրի խմբագրական կազմը ի նկատի ունենալով այն խառնաշփոթութիւնը, որ առաջ է բերել հայոց լեզուի մէջ «ւ» և «վ» տառերի գործածութեան հարցը, անհիմն և անգիտնական գտնելով «ւ»-ի գործածութիւնը, որոշել է գործածել «վ» տառը։ Ամսագրի առաջին համարում կը տպվի Ստ. Մալխասեանի պատճառաբանեալ յօդուածը այդ մասին։

◆ Յովնանեան դպրոցի հոգաբարձական խորհուրդը դեկտեմբերի 16-ին կայացած իր նիստում հետևեալ կերպով է կազմակերպվել. նախագահ՝ Թեմական առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս, փոխ-նախագահ՝ Ս. Մելքումեան, գանձապահ՝ Մ. Մելիքեան։ Խորհրդի անդամներ՝ Կուսանաց վանքի մայրապետ, բժշկապետ Բ. Նաւասարդեան, Հ. Առաքելեան, Նիկ. Յովնանեան և տեսուչ Ռազմաձեան։ Նոյն նիստում հոգաբարձութիւնը որոշել է դպրոցի համար բերել տալ միայն մանկական և մանկավարժական պարբերական հրատարակութիւններ, որոնց մէջ հայերէն «Հասկեր» և «Աղբիւր» ամսագրերը։

◆ Այսօրվայ իր նիստում Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութիւնը բացի զեկուցումներից կը լսի վարչութեան հաղորդագրութիւնը նրա ընթացիկ գործունէութեան մասին։ Ժողովը տեղի կունենայ Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան դահլիճում։ Կարող են ներկայ լինել նաև կողմնակի անձեր։ Սկիզբն է երեկոյեան ժամը 7-ին։

◆ Այսօր տեղի կունենայ Թիֆլիսի քաղաքային վարչութեան և դումայական ֆինանսական մասնաժողովի միացեալ նիստը՝ կազմելու 1910 թւի քաղաքի ելմտի հաշւեկշիռը։

◆ Վաղը կը կայանայ քաղաքային դըպրոցական մասնաժողովի նիստը՝ ընտրելու թոշակաւորներ Թիֆլիսի ռէալական դըպրոցի և իգական գիմնազիաների համար։ Խնդրատուների թիւը շատ մեծ է։

◆ Այսօր Զուբալովեան ժողովրդական տանը հայ թատերասէրների խումբը կը խաղայ Մաքսիմ Գորկիի «Յատակում» պիէսը։

---

*) Տես «Братская Помощь», II изд., Москва 1898.

◆ Վ.րիպակ.—«Մշակի» երէկվայ համարի Պետական Դումայի մէջ մի սխալ է սպրդել. Բոբրինսկիի խօսքերի մէջ փոխանակ լինելու «շպրտվում են այդ դիակի վրա», տպված է «տեսակի վրա»։

◆ «Кавказъ» լրագրի հրատարակութիւնը Ն. Կ. Մ. Կովկասի Փոխարքան 1910 թւի յունվարի 1-ից յանձնել է Վ. Սարատօնովին։

◆ Թիֆլիսի նահանգապետը տեղեկացրեց քաղաքագլխի պաշտօնակատարին, որ նա քաղ. կան. 103-րդ յօդւածի ոյժով թոյլատրում է դումայից ընտրված գնահատող հաստատութիւնները ստուգող գործակիր մասնաժողովի անդամներ Կ. Կուչինբախին և Գ. Մուրադովին և դպրոցական գործակիր մասնաժողովի անդամներ Ալդադանովին, Բարտուին, Դէմիրդովին, Զիբէրտին, Ռ. Յովհաննիսեանին, Մ. Քանանեանին Ն. Քարթվէլովին, Յ. Մելիք-Բէգլարեանին, Մ. Նէպրինցէվին և Ս. Ցիշէրին ստանձնել իրանց պարտականութիւնները։ Իսկ մնացած անձանց վերաբերութեամբ, որոնք են՝ Հ. Առաքելեան, Ս. Բաբալեան, Յ. Խունունց, Ս. Զրէլաէվ և Գ. Շադինեան, որոնք ընտրված են նոյնպէս դպրոցական մասնաժողովի անդամներ, նահանգապետը կը տեղեկացնէ քաղաքագլխի պաշտօնակատարին լրացուցիչ կերպով։

◆ Թիֆլիսի նահանգում զէմստվօ մտցնելու խնդրով զբաղվող նահանգական խորհրդակցութեան բոլոր արձանագրութիւնները և զեկուցագրերը ներկայումս արդէն տպագրվում են և տպագրված կուղարկվեն երկրագործութեան դեպարտամենտին։

◆ Թիֆլիսի նահանգապետը թոյլատրել է 5-րդ իգական գիմնազիայի ծնողական ժողովի նախագահուհուն կազմել դեկտեմբերի 20-ին երաժշտական դպրոցի դահլիճում յօգուտ յիշեալ գիմնազիայի աղքատ աշակերտուհիների դասախօսութիւն, որ կը կարդայ Ս. Յովհաննիսեանը Լէօնիդ Անդրէեվի «Անաթէմայի» մասին, իսկ 2-րդ արական գիմնազիայի ծնողական ժողովի նախագահին—կազմել դեկտ. 28-ին Թիֆլիսի Արտիստական Ընկերութեան շինութեան մէջ համերգ, բայց առանց վիճակախաղի։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Դեկտ. 15-ին Թիֆլիսեցի Սաթենիկ Մալխասեանը, որ ապրում է Էկզարքեսկայա հրապարակի վրա, յայտնեց ոստիկանութեանը, որ նոյն օրվայ գիշերը տան նախասենեակից գողացել են մի տղամարդու վերարկու 60 րուբլանոց։ Կասկածը տիկինը յայտնեց Բագրատիօնովսկայա փողոցում ապրող ազնւական Ալէքսանդր Շանշիէվի (որ պատրաստվում է աւարտական քննութեան) և նրա ընկեր ազնախեցի Իվան Մակաշվիլու վրա՝ անորոշ պարապմունքի։ Վերջիններս ձերբակալված են։

◆ Սօլօլակսկայա փող. № 5 տանը ապրող Բագուի 2-րդ կարգի վաճառական Հայրապետ Տէր-Սահակեան յայտնեց ոստիկանութեանը, որ դեկտ. 14-ին, գիշերվայ ժամը 12-ին, վերադառնալով կնոջ հետ արքունական թատրօնից, նկատեց իրանց աղախին 20 տարեկան Պելագէա Մերեշկինայի բացակայութիւնը, որը, ինչպէս վերջում պարզվեց, յափշտակելով 2825 րուբլու գոհարեղէն, ոսկեղէն և արծաթեղէն անյայտացել է յայտնի չէ ուր։

◆ Դեկտ. 15-ին ոստիկանութեան պաշտօնեաները Վօդօստօչնի նրբափողոցում, № 9 տանը, Թիֆլիսեցի Մարիա Կօրբէլօվայի բնակարանում, ձերբակալեցին 80-ամեայ մի անյայտ մարդու, որ իրան անուանեց գիւղացի Միխայիլ Կուզնեցօվ, որը իսկապէս երևաց Թիֆլիսեցի Պետր Սօլօմօնովիչ Կօրբէլօվ (Մարիայի որդին)։ Ձերբակալվածը յայտնեց, որ 1879 թւին նա ձերբակալվեց Թիֆլիսում, որպէս այն ժամանակ Թիֆլիսում և նրա շրջակայքում բուն դրած աւազակային խմբի առաջնորդ, և Կովկասի փոխարքայ Միխայիլ Նիկօլայեվիչի (նորոգ հանգուցեալ) կարգադրութեամբ յանձնվեց կովկասեան զինւորա-նահանգական դատարանին, որը իրան դատապարտեց ցմահ տաժանակիր աշխատանքների. այդտեղից 1889 թ. փախաւ, բայց Կովկաս գալիս ձերբակալվեց Կուրսկի նահանգում թափառելու պատճառով, և իրան անուանեց օրէնբուրգցի Միխայիլ Կուզնեցօվ և ստուգելու համար ուղարկվեց Օրէնբուրգ, ուր կեղծիքը բացվելուց յետոյ աքսորվեց Սիբիր։ Այստեղից նա նոյնպէս փախաւ և անցեալ տարի յուլիսին եկաւ Թիֆլիս, ուր և ապրում էր մինչև օրս իր մօր մօտ։ Տ. Մարիա Կօրբէլօվան նոյնպէս ձերբակալված է։

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

◆ Ամերիկեան Միացեալ-Նահանգների կառավարութիւնը վերջերս մի կարգադրութիւն է արել, որի զօրութեամբ ասիացիները այսուհետև չեն կարող ամերիկական քաղաքացիութեան կոչում ունենալ։ Այդ կարգադրութիւնը, որ արված է գլխաւորապէս չինական գաղթականական հոսանքը դէպի Միացեալ-Նահանգները կասեցնելու համար, մասամբ և հայերի առաջ դժուարութիւններ է յարուցանում։ Այսպէս՝ այդ կարգադրութիւնը հրատարակվելուց յետոյ եղել են մի շարք դէպքեր, երբ Միացեալ-Նահանգների գաղթանականական դեպարտամենտը մերժել է իրան դիմող այն հայերի ցանկութեանը բաւականութիւն տալ, որոնք կամեցել են ամերիկեան քաղաքացիութեան կոչումն ստանալ։

Ամերիկայում հրատարակվող «Ազգ» թերթը, խօսելով այդ հարցի մասին, ասում է, թէ, ամերիկեան տեսակէտով նայելով խնդրի վրա, բնաւ զարմանալի չէ Միացեալ-Նահանգների՝ Թիւրքահայերի վերաբերմամբ ևս բռնած այս ընթացքը, որովհետև Թիւրքիան ճանաչված է որպէս ասիական պետութիւն, իսկ այդ երկրում բնակվողները՝ որպէս ասիացիներ, ինչ ցեղի էլ պատկանելիս լինեն նրանք։ Ամերիկացիները օսմ. պետութեան սահմաններում ապրողներին անխտիր նկատում են Թիւրքեր և չեն կարողանում ըմբռնել այն, որ կարելի է Թիւրքիայում ապրել, այնտեղ ծնված լինել, բայց Թիւրք չը լինել։

Եւ որպէս զի ամերիկեան կառավարութեան այդ նոր կարգադրութիւնը չը տարածվի և հայերի վրա, ամերիկեան դատական մի պաշտօնեայ թելադրել է, որ Թիւրքահայերն այսուհետև իրանց խնդրագրերում յիշեն իրանց ծննդավայրի անունը «Հայաստան» բառով, եթէ, ի հարկէ, չեն ցանկանում Թիւրք նկատվել։ «Ազգի» ասելով, դա շատ գործնական մի միջոց է, որով մանաւանդ՝ հայերը բուն Թիւրքերից անմիջապէս կը զանազանվեն։ Վերջերս ամերիկեան թերթերում հրատարակվել էր Բոստոն քաղաքի ստատիստիկական տեղեկագիրը, որից երևում էր, որ այդ քաղաքում բաւականին Թիւրքեր կան, իսկ հայեր՝ շատ սակաւ։ Բայց իրողութիւնն այն է, որ այդ քաղաքում բնակութիւն հաստատած Թիւրքերին մատների վրա կարելի է հաշւել, իսկ Միացեալ-Նահանգների մայրաքաղաքում ապրող հայերի թիւը, համեմատած այնտեղի Թիւրքերի թւի հետ, չափազանց մեծ է։ Այդ սխալը առաջացել է պարզապէս այն բանից, որ Թիւրքահայերն իրանց ծննդավայրը ցոյց են տալիս Թիւրքիան։

◆ Հայ-կաթօլիկների կաթողիկոս-պատրիարքի ընտրութեան մասին դեռ ևս որոշ տեղեկութիւններ պակասում են մեզ։ Սակայն, ինչպէս տեղեկանում ենք Կ. Պօլսից վերջին պօստով ստացված թերթերից, հրաժարեցված Սապպաղեան կաթ.-պատրիարքի փոխարէն տեղապահ ընտրված և օսմ. կառավարութեան կողմից հաստատված Գօյունեան եպիսկոպոսի՝ կաթողիկոս-պատրիարք ընտրվելու շանսերը այնքան էլ մեծ չեն։ Բանն այն է, որ նորահաստատ տեղապահը, ինչպէս Կ. Պօլսի մեր թղթակից Շահէնի վերջին թղթակցութիւնից երևում էր («Մշակ» № 278), այնքան էլ մեծ ժողովրդականութիւն չէ վայելում, մանաւանդ Եգիպտոսի հայ-կաթօլիկների շրջանում, որոնց առաջնորդն էր Գօյունեան եպ.։ Եգիպտոսի հայ-կաթօլիկները դիմել են Կ. Պօլսի հայ-կաթօլիկների պատրիարքարանին, յայտնելով որ Գօյունեան եպ. չէ գործադրել այն կանօնագիրը, որ սահմանված է եգիպտական հայ-կաթօլիկ գաղութի գործերը վարելու համար։ Ընտրութեան օրերին՝ այս յայտնութիւնը վատ տպաւորութիւն է առաջ բերել հայ-կաթօլիկ սինօդականների շրջանում, որոնք հաւաքվել են Կ. Պօլիս կաթ.-պատրիարքի ընտրութեան համար։ Հայ-կաթօլիկների բարձրագոյն հոգևոր պետի պաշտօնի համար առ այժմ ընտրվելու շանսեր ունեն Ադանայի առաջնորդ Թէրզեան եպ., որ մի լուսամիտ և լաւ հայ է նկատված, և Բուպեան եպ., որ վերջերս է միայն Կ. Պօլիս հասել Հռոմից։

◆ Երզրումից գրում են «Баку» լրագրին. «Եղիշէ Թոփչեանին սպանողը գտնվում է տեղական բանտում։ Դատարանը նրան որոշեց մահվան պատժի ենթարկել։ Ներկայացված է բողոք, և եթէ 2-րդ ինստանցիայում դատավճիռը չը փոխվի, դեռ ևս պէտք է սուլթանը վաւերացնէ։ Բոլորը համոզված են, որ նա կը կախվի։ Տեղական նահանգապետը, համաձայն իր խոստման, 200 ր. պարգև նշանակեց մարդասպանին բռնողներին, բայց նրանք հրաժարվեցին, ինչպէս չը վերցրին այն 500 րուբլին, որ ուղարկել էր Կ. Պօլսից ներքին գործերի մինիստր Թալաաթ-բէյը։ Այդ պատճառով այդ պարգևները տրվեցին յիշեալ անձանց օգնող պահակներին»։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

◆ Բագուի քաղաքապետի պաշտօնակատար գնդապետ Մարտինովը իր խորին շնորհակալութիւնն է յայտնում Բագուի վաճառական Դաւիթ Աւան-Իգրաշեանին Բագուի բանտին կից ախտահան կամերա հաստատելու համար մի հազար րուբլի նուիրաբերելուն համար։

◆ Բագուի քաղաքապետը թոյլատրել է Հաշիմ-բէկ Վեզիրովին հրատարակել Բագու քաղաքում իր խմբագրութեամբ և լիակատար պատասխանատւութեամբ մի քաղաքական-գրական և տնտեսական հասարակական օրաթերթ թուրքերէն՝ «Սադա» անունով։

◆ Դեկտեմբերի 18-ին տեղի է ունենալու մի շքեղ երեկոյթ համերգային բաժնով յօգուտ Բագուի Հ. Կ. Միութեան։

◆ Կիրակի օրը, դեկտեմբերի 12-ին, իր պաշտօնատեղում ինքնասպանութեան փորձ արեց Բագուի գաւառապետ փոխ-գնդապետ Բակինովսկին, կրակելով ատրճանակից ճակատին։ Բայց շնորհիւ ձեռքը դողդողելուն, գնդակը ճակատի երեսով խրվել էր աչքի մէջ։ Վիրաւորվածի դրութիւնը շատ լուրջ է, բայց և կեանքը փրկելու յոյսը դեռ չէ կորած։ Նա թողել է մի գրութիւն հետևեալ բովանդակութեամբ. «Զրկվելով առողջ մտածողութեան ընդունակութիւնից և կամքի ոյժից, ընտանիքիս մատնում եմ քաղցի և մուրացկանութեան։ Աղերսում եմ իշխանութեան և հասարակութեան արձագանք տալ իմ հառաչանքին։ Բակինովսկի»։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Կիէվի առևտրական ճեմարանում մեծ աջողութեամբ կարդացել է իր առաջին դասախօսութիւնը քաղաքատնտեսութիւնից տիկին Կորժեւսկին։ Պրոֆեսորները և ուսանողները ջերմագին ողջունել են կին-պրոֆեսորին։

◆ Եալթայից «Земщина» թերթը ստացել է հետևեալ հեռագիրը. «Նոյեմբերի 28-ին ռուս ժողովրդի միութեան Օդեսսայի բաժնի նախագահը բաղդ ունեցաւ ներկայանալ Թագաւոր Կայսրին և Թագուհի Կայսրուհուն և արժանացաւ հրաւիրվելու Բարձրագոյն նախաճաշին։ Հաղորդելով արքայական այս մեծ ողորմածութեան մասին, որ նա արել է ռուս ժողովրդի միութեանը, խնդրեմ յայտնի կացուցանէք միութեանը այդ մասին։ Նախագահ կոմս Ալէքսեյ Կոնօվնիցին»։

◆ Առևտրի և արդիւնաբերութեան մինիստրի հարցմունքին՝ թէ արդեօք ցանկալի՞ է ռուս արդիւնաբերական ցուցահանդէս սարքելը Լոնդոնում, Մոսկվայի բորսային կոմիտէտը բացասական պատասխան տւեց, ապարդիւն գործ համարելով ցուցահանդէս սարքելը Լոնդոնում։ Ռուսաստանից Անգլիա հնարաւոր է արտահանել այնպիսի արդիւնքներ, որոնք արդիւնաբերվում են Ռուսաստանում աւելի էժան, քան ուրիշ երկրներում, սակայն այդպիսի արդիւնաբերութեան պայմանների հետ մեզ մօտ շատ լաւ ծանօթ են անգլիացիները և առանց ցուցահանդէսի։ Իսկ ի ցոյց դնել մեր մշակվող արդիւնագործութեան արդիւնքները, որոնք շատ թանգ են նստում մեզ, կը նշանակէր մի աւելորդ անգամ ի ցոյց դնել մեր յետամնացութիւնը։

◆ Լուրերի համեմատ, սենատոր Գարինը հրաժարվեց քննութիւն կատարել Վարշավայի զինուորական շրջանում՝ սաստիկ ծանրաբեռնված լինելու պատճառով Մոսկվայի շրջանի քննութեան գործերով։ Ինչպէս երևում է, քննութիւնը շարունակվելու է Մոսկվայում հետևեալ տարվայ գարնանը և ամառը։

◆ Մի շարք խորհրդակցութիւնները ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ միջնակարգ դպրոցը վերանորոգելու հարցի մասին՝ միտք ծնեցրին խորհրդակցութեան անդամների մէջ արական և իգական գիմնազիաների ու ռէալական դպրոցների ուսուցիչների համաժողով հրաւիրել՝ քննելու համար գիտական պատրաստութեան անկման պատճառները միջնակարգ դպրոցում։ Մտադրութիւն կայ ուսուցիչների համաժողով գումարել Պետերբուրգում մօտաւորապէս մայիս ամսին։

◆ Ազգութիւնների միացման ընկերութիւնը, որպէսզի աւելի տարածէ իր գործունէութիւնը, վճռել է կանօնաւոր յարաբերութեանց մէջ մտնել ամբողջ պետութեան մէջ առանձին անհատների և հաստատութեանց հետ և կազմակերպել ուղևորութիւններ և խմբական էքսկուրսիաներ անձամբ ծանօթանալու ժողովուրդների կուլտուրայի հետ։ Ընկերութեան խորհուրդը նպատակայարմար է գտել կազմակերպել մի շարք յանձնաժողովներ, որոնցից կարևորագոյնն է գաւառականը, որ նպատակ ունի արծարծել և պահպանել ընկերութեան կապը գաւառի հետ և աշխատել այնտեղ էլ ընկերութեանց բաժանմունքներ բանալ։

◆ Պատգամաւոր Կրուպէնսկին ստացել է հետևեալ հեռագիրը. «Թագաւոր Կայսրը բարեհաճել է հրամայել ինձ շնորհակալութիւն անել համառուսական ազգային ակումբի հիմնադրողների առաջին ժողովին՝ ձերդ գերազանցութեան ուղարկած հեռագրի մէջ յայտնած զգացմունքների համար և ցանկալ ակումբին աջողութիւն»։ Ստորագրել է կայսերական դրան մինիստր բարօն Ֆրեդերիկս։

◆ Րիգայում մի խումբ էստօն լրագրողներ դատվել են զինւորական դատաստանով յեղափոխութեանը մասնակցելուն համար։ 6 հոգի դատապարտված են տաժանակիր աշխատանքների 3-ից մինչև 8 տարի, մէկը՝ աքսորի, մէկը միամեայ բանտարկութեան. մէկը՝ արդարացել է։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Դեկտեմբերի 15-ին, երեքշաբթի օր, ռուսաց դրամատիկական խումբը Արտիստական Թատրօնում ներկայացրեց Վլ. Պերժինսկու «Փողոցի աղջիկը» (Աշանկա) 3 գործ. կոմէդիան և Վլ. Բէրժէի «Ճանապարհ կնոջ» (Дорогу женщинѣ) մի գործ. տեսարանը։

Առաջին պիէսի մասին «Մշակում» արդէն մանրամասն գրվել է, այդ պատճառով աւելորդ ենք համարում նորից կանգ առնել դրա վրա, իսկ երկրորդի՝ մի գործողութեամբ տեսարանի նիւթն է կանանց ազատագրութեան պաշտպանուհիների գործունէութիւնը՝ ժողովներն ու մեծաղորդ ճառերը դեսպօտ տղամարդկանց հասցէին։

Երկու պիէսների հետաքրքրական բովանդակութիւնը և դերակատարների կենդանի, սահուն և աշխոյժ խաղը մեծ բաւականութիւն և զուարճութիւն պատճառեցին հանդիսականներին։ Առանձնապէս աչքի էին ընկնում իրանց խաղով դերասանուհի Բօրսկայան (Աշանկա) և դերասան Շախալօվը (բարօն Կրէնցկի) առաջին՝ «Փողոցի աղջիկը» պիէսում, իսկ դերասանուհի Տէնիշէվան (Եվլալիա Շպից) երկրորդում։ Ափսոս որ այդ օրվայ էժանացրած գներով (10 կ.—1 ր. 50 կ.) մատչելի և հետաքրքրական ներկայացման թատրօնը կատարելապէս լի չէր։ Ներկայ եղող մեծ թւով հասարակութիւնը բուռն ծափահարութիւններով յայտնում էր իր գոհունակութիւնը թէ հետաքրքրական պիէսների և թէ շնորհալի խաղի համար։ Հ.

ՄԱՄՈՒԼ

Արտասահմանեան հայ մամուլի քննութեան առարկայ է ներկայումս հայ քաղաքական կուսակցականութիւնների դէմ սկսված պայքարը Թիւրքիայի հայ ժողովրդի մէջ։ Ինչպէս յայտնի է, վերջերս Կ. Պօլսի ազգային ժողովը նոր քաղաքական ժողովի ընտրութեան ժամանակ սևացրեց բոլոր այն կանդիդատներին, որոնք պատկանում են այս կամ այն յեղափոխական կուսակցութեան։

Արդ, ինչ է պատճառը, որ դեռ մի տարի առաջ հայ ժողովուրդը Թիւրքիայում գրկաբաց ընդունեց կուսակցականներին, իսկ այժմ այնպէս խիստ կերպով երես է դարձնում նրանցից։

Այդ հարցը աշխատում է լուծել Կահիրէի «Լուսաբեր-Արև» թերթի մէջ Յ. Սէքսէնեան.

Հայ քաղ. կուսակցութիւնը մեր ներկայ ազգային-ներքին հարցերուն ամենակարևորներէն մէկը կը կազմէ վերջապէս։

Հակադաշնակցական պայքարը՝ որ վերջ ի վերջոյ վերածուեցաւ, բնական կերպով, հակակուսակցական ընդհանուր շարժումի մը՝ բառին բուն իմաստով ճշմարիտ քրիզ մը ստեղծեց այսօր՝ հայ կուսակցականութեան ծոցին մէջ։

Մամուլէն վերջ հասարակութիւնը, հասարակութենէն վերջ ազգային իշխանութիւնք միահամուռ և միանուագ մղեցին օրուան պայքարը՝ կատարելապէս անշահախնդիր և բոլորովին անաչառ կերպով։

Այնքան բնական և անխուսափելի էր շարժումը՝ որքան բանական և յարմարիթ։

Հարուածը ջախջախիչ եղաւ, և պարտութիւնը աւելի քան իրական։

Քաղաքական ժողովոյ անկումը նախ Շահրիկեանի և անոր քլիքին դէմ իբրև անձնական հակակրութիւն մը կարծուեցաւ և կամ անանկ կարծեցին կուսակցականները։ Իսկ երբ նորակազմ վարչութեան անդամակցութեան մէջ ազգային ժողովը չդրաւ և ոչ իսկ մէկ հատ կուսակցական, իրականութիւնը աւելի ևս մերկապարանոց դուրս ցցուեցաւ, և ալ տարակոյս չմնաց, թէ մասնաւոր հակակրանք մը բոյն դրած էր ազգին մէջ ընդդէմ ընդհանուր կուսակցականներուն։

Եւ ահա ազգ. երեսփ. ժողովի վերջին նիստին մէջ իրողութիւնը բացէն խնդրոյ առարկայ կը դառնայ։ Կուսակցականները իրենց դէմ բացուած այս պայքարին դէմ կը բողոքեն։ Ասոնցմէ Հ. Արամեան (հնչակեան), մատնանշելով թէ ներկայ հալածանքները ազգին մէջ անդնդախոր խրամատ մը բանալու բնոյթն ունին, պնդեց որ անմիջապէս դադարեցուի պայքարը։ Վ. Փափազեան (դաշնակցական), շեշտեց թէ որոշ և նպատակաւոր հալածանք մը կայ քաղ. կուսակցութեանց «դէմ, խեղդիչ և կեղծիքներով լի մթնոլորտ մը» (?) անուանելով միանգամայն ազգային ժողովը։ Իսկ Գ. Զօհրապ, «Դաշնակցութեան համակիրը», բացէն յայտարարեց, թէ պէտք է գործի գլուխ կոչել նաև կուսակցական անդամներ, քաղ. ժողովի հրաժարեալ անդամներուն տեղ՝ ընդունելով անոնց հրաժարականները։

Ապա յօդուածագիրը խօսելով թէ «Ազատամարտը» ազգ. ժողովի այդ ընթացքը պախարակելով «հայհոյանք և լուտանք է թափում հայ ազգի երեսին» և ազգի ներկայացուցչութիւնը և նրա հետ ամբողջ ազգը ներկայացնում է իբրև «դաւաճան, սուտ և շինծու զրպարտութիւններ կրկնող», կցում է, թէ չէ կարելի հանդուրժել այդ ամբաստանութեանը։

Ու յետոյ, ամբողջ հայ ազգը ներկայացնել իբրև թշնամի յեղափոխութեան, իբրև կռիւ մղող յեղափոխութեան դէմ, ինք որ բնականէն յեղափոխական ծնած ազգ մըն է։ Համբակութիւնը ալ այսչափ միայն կրնայ ըլլալ, չըսելու համար չարամտութիւնը։

Այո, ազգը ներկայիս կը կռուի, բայց ոչ թէ յեղափոխութեան դէմ, այլ մասնաւորապէս կուսակցութեան մը դէմ։ Ազգը կամբաստանէ ոչ թէ սուտ զրպարտութեամբ, այլ ճշմարիտ վկայութիւններով։ Վասպուրականի խնդիրը, հակակրօնականութիւնը, ազատ սէրը, նոր-դաշինքը շինծու փաստեր չեն, այլ իրողութիւններ զոր չկրցաւ հերքել Դաշնակցութիւնը, երկար զալարումներէ վերջ։

Իսկ մէկդի այս ամէնը՝ մենք պիտի հաւատայինք «Ազատամարտի» բառերուն, եթէ սակայն համոզէր անիկա մեզ, կամ գէթ բացատրէր թէ ինչ կրնայ ըլլալ ուրեմն ազգին շարժառիթը՝ որ նստած տեղը ստեղծէր սուտ ու փուճ բաներ՝ թանկագին (ամենափրկիչ) կուսակցութեան մը դէմ։ Մենք երբեք չենք կրնար ընդունիլ զրոյց մը՝ առանց փաստացումի, առանց վաւերացումի։

Ո՛չ, ազգը պատրանքի մէջ չէ երբեք, ոչ ալ կոյր հօսանքէ մը կը մղուի անիկա։ Բոլորովին զգօնակից և ինք իր տէրը՝ այսօր աւելի գիտակից և հեռատես աչքով մը կը նայի անիկա այժմու կուսակցութեանց և կուսակցականներուն վրայ, և զանոնք իրենց պարտաւորիչ դերին մէջ չտեսնելով անօգուտ, նոյն իսկ վնասակար կը համարի զանոնք։ Ուրիշ ենթադրութիւն մը ինքնահակասական և անտրամաբանական պիտի ըլլար բոլորովին։

Եւ արդարև մինչև հիմա տեսնուածներէն, գրուածներէն ու խօսուածներէն բացայայտ երևան եկաւ, թէ ներկայ քաղաքական կուսակցութիւններու ծրագիրը և գործելակերպը չի պատշաճիր մեր ներկայ պէտքերուն, մեր ներկայ կեանքին ու կազմին։ Անոնք իրենց իրական դերին մէջ չեն։

Անկումի շրջանն է ուրեմն որ կը բոլորեն անոնք ներկայիս։

Ինչպէս ամեն հաստատութիւն, ամեն պետութիւն իր քայքայումի շրջանը ունեցած է պատմութեան մէջ, նոյնպէս մեր յեղ. կուսակցութիւններն ալ իրենց անկումի շրջանին մէջն են այս պահուս։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Էնզելի, 4 դեկտեմբերի

Այսօր պատահմամբ ձեռքս անցաւ Կ. Պօլսում լոյս տեսնող «Ազատամարտ» անունով թերթի № 123-ը, որի մէջ արտատպված էր Կովկասում Հ. Յ. Դաշնակցութեան կողմից դուրս թողած «Թռուցիկ»։

Մեր նպատակից դուրս է «Թռուցիկ» կոչվածի մանրամասն քննադատութիւնը. միայն, որպէս հայ հասարակութեան անդամ, պարտք եմ համարում մի քանի խօսք ասել այդ առիթով։

Իսկապէս պէտք է կարդալ այդ գոհարները և այն ժամանակ իմանալ՝ թէ ինչպիսի մարդիկ են խօսում գաղափարից, արդարութիւնից, ազատութիւնից, մարդկութիւնից և այլ այսպիսի վեհ անուններից։ Կարդալուց յետոյ այդ, մարդ չէ իմանում ինչ անուն տայ նման գրուածքների հեղինակներին։ Թռուցիկ կոչվածը խանգարված ուղեղի արտադրութիւն է, որով խայթում է ամեն մարդու, առանց հաշիւ տալու և մտածելու։ Եւ այդպիսի Թռուցիկների հեղինակները յանդգնութիւն և յաւակնութիւն ունեն իրանց յեղափոխական կոչելու, եղած կեանքը բարելաւելու։ Միթէ լպիրշ հայհոյանքով կարելի կը լինի դաստիարակել մասսային կամ, որպէս իրանք են յաճախ ասում, «աշխատաւոր դասակարգին»։

Հայ կեանքը թունաւորվեց այդպիսի Թռուցիկների և դրանցից աւելի վատթար պրօպագանդայի շնորհիւ։ Եղած չափ ծանր և հանգիստ աշխատող հայ մարդը եղբայրասպան դարձաւ կրկին այդպիսի սխալ ու ծուռ դաստիարակութիւնից։

«Կրակ ցանողը հրդեհ կը հնձի»,—ասում է ժողովրդական առածը։ Դուք էիք, որ հայ ժողովրդին մղեցիք դէպի եղբայրասպանութիւն, ոճրագործութիւն և այլ ստորացուցիչ արհեստի։

Գաղափարական հարցը դուք միշտ զէնքով էք լուծել և հէնց այսօր էլ շարունակում էք նոյն սխալ ընթացքով առաջ գնալ։ Ո՞վ էր մեղաւոր Ե. Թոփչեանի սպանութեան մէջ։ Դուք, միմիայն դուք։

Չէ՞ որ այդ սպանիչները ձեր կրթած և սնուցածներն են։ Դուք այդ միջոցով էիք սպանում հայ գրչի զինւորներին և հէնց այսօր էլ նրանց նմանների միջոցով էք սպառնալիք կարդում մի շարք մարդկանց։ Գուցէ ձեր յեղափոխական լինելը այդ սպանութիւններով էք ցոյց տալիս, կամ ինչո՞ւ ձեր սպանելը օրէնք էք շինում։ Սպանութիւնը գաղափարական հողի վրա միշտ էլ դատապարտելի է, ով որ լինի հեղինակը՝ միևնոյն է։ Իսկ դուք այդպէս չէք մտածում։ Սպանում, ծեծում, անարգում, թքով էք լուանում նրանց, որոնք ձեր հակառակն են մտածում և քարոզում։ Էլ ինչո՞ւ էք մեղադրում կառավարութիւններին, որ իրանց նման չը մտածողին բանտարկում և աքսորում են։ Սպանութիւնը ոճիր է. հեղինակը ես լինեմ թէ դուք՝ միևնոյն է։ Օրէնքը միատեսակ պէտք է երկուսիս համար էլ։ Այդ է պահանջում իսկական ճշմարտութիւնը և այդ ուղով էլ պէտք է առաջնորդվի ամեն՝ թէ մարդ, թէ խմբակցութիւն և թէ կուսակցութիւն։

Այժմ էլ խեղկատակութիւնը և պրովոկատորութիւնը այնքան առաջ տարաք, որ ձեր սեփական ոճիրները Թիւրքիայում աշխատում էք փաթաթել սպանութիւնների այնպիսի համոզված հակառակորդների շլինքին, ինչպէս են Թիֆլիսում նստողներ՝ Ա. Քալանթար, Հ. Առաքելեան և այլ մարդիկ։

Թողէք ձեր ստոր սպառնալիքները, բաւական է որքան անարգել առաջ գնացիք։

Թիւրիմացութեամբ մարդ անունը կրողներ, թողէք նաև «աշխատաւոր ընկերներին» իրանց ցաւերի և աշխատանքի յետեւից գնան. նրանք փախչում են եղեռնագործութիւնից և ձեզ նման ինքնակոչ քարոզիչներից։ Մուշեղ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

15 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Կարմիր Խաչի ուսանողական ընկերութեան գլխաւոր վարչութիւնը 10,000 րուբլի յատկացրեց կռւելու Մոսկվայում խօլերայի դէմ։

Խօլերայով հիւանդ պառկած են 21 մարդ։

ՄՈՍԿՎԱ. Խօլերայով հիւանդացան 6, մեռաւ 1 հոգի։

Երևան հանվեց 10 անձանց գաղտնի ժողով։

Բացվեց քաղաքային գիշերային ապաստարան Մօրօզովի անուան 200 հոգու համար։

ԿԻԵՎ։ Հարաւ-Արևմտեան երկաթուղագծի մի քանի մասերում ուժեղ փոթորիկ է։ Գնացքները երթևեկում են անկանոն կերպով։ Ուղարկվեցին մեծ թւով բանուորներ մաքրելու գիծը ձիւնից։

ՎՈԼՈԳԴԱ։ Նահանգական զեմստվային ժողովը որոշեց միջնորդել բանալու նահանգում ուսուցչական ինստիտուտ։

ՏՕԿԻՕ։ Կարմիր Խաչի ընկերութեան նախագահ մարկիզ Մացուկատօն, զինուորական մինիստր Տէրուցին և արտաքին գործերի մինիստր կոմս Խաեասին պարգևատրվեցին ռուսական Կարմիր Խաչի առաջին կարգի նշաններով Պորտ Արտուրում ռուս վիրաւորներին խնամելու համար։

Կ. ՊՈԼԻՍ։ Տեղս հասաւ ռուսական շարժական ցուցահանդէսը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմերային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ պոստատար գնացքը 11 ժ. 40 ր. գիշեր., Գանձակ է հասնում 6 ժ. առաւօտ., Եւլախ՝ 8 ժ. 9 ր. առաւօտ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 12 ր. կէսօր., Բալաջարի՝ 4 ժ. 45 ր. ցերեկ., Բագու՝ 6 ժ. 9 ր. երեկ.։ Մարդատար գնացք № 6՝ 8 ժ. 11 ր. երեկ., Գանձակ է հասնում 2 ժ. 32 ր. գիշեր., Եւլախ՝ 4 ժ. 41 ր. գիշեր., Հաջի-Կաբուլ՝ 9 ժ. 12 ր. ցերեկ., Բագու՝ 2 ժ. 10 ր. ցերեկ.։ Խառն գնացք չորրորդ կարգի վագոններով, միայն ըստ հարկի կարևորութեան, 7 ժ. 3 ր. առ., Բագու է հասնում 11 ժ. 43 ր. կէսօրվայ։ Արագացված գնացք № 12՝ 10 ժ. 11 ր. երեկ., Գանձակ է հասնում 4 ժ. 13 ր. գիշեր., Եւլախ՝ 6 ժ. 8 ր. առ., Հաջի-Կաբուլ՝ 10 ժ. 32 ր. ցեր., Բալաջարի՝ 1 ժ. 45 ր. կէսօր., Բագու՝ 2 ժ. 20 ր. ցերեկ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ պոստատար 1 ժ. 37 ր. գիշ., Ալէքսանդրոպոլ է հասնում 12 ժ. 21 ր. ցեր., Էջմիածին կայարան՝ 5 ժ. 30 ր. եր., Նախիջևան՝ 11 ժ. 30 ր. գիշ., Ջուլֆա՝ 1 ժ. 4 ր. գիշ.։ Մարդատար ապրանք.՝ 4 ժ. 20 ր. ցեր., Ալէքսանդրոպոլ է հասնում 3 ժ. 16 ր. գիշ., Էջմիածին՝ 8 ժ. 46 ր. առ., Ուլուխանլու՝ 9 ժ. 16 ր., Երևան՝ 10 ժ. 14 ր. առ., որից դէնը այլ ևս չէ գնում։ Խառն գնացք չորրորդ կարգի վագոններով ըստ հարկի կարևորութեան՝ 5 ժ. 8 ր. ցեր., Ալէքսանդրոպոլ՝ 6 ժ. 56 ր. առ., որից դէնը այլ ևս չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ մարդատար № 7՝ 8 ժ. 10 ր. երեկ., Բաթում է հասնում 9 ժ. 42 ր. առ.։ Պոստային՝ 9 ժ. 42 ր. երեկ., Բաթում է հասնում 11 ժ. 48 ր. առ.։ Մարդատար № 5՝ 1 ժ. գիշ., Բաթում է հասնում 2 ժ. 8 ր. ց.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ պոստատար գնացքը 8 ժ. 42 ր. առաւ., մարդատար № 5՝ 12 ժ. 11 ր. գիշ., Արագացված № 11՝ 10 ժ. 47 ր. առ.։ Վերջին գնացքը չէ գնում Բաքում։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ մարդատար № 6՝ 7 ժ. 21 ր. երեկ., պոստային՝ 10 ժ. 40 ր. երեկ., մարդատար № 8՝ 12 ժ. 17 ր. կէսօրին։ Վերջին գնացքը Բագու չէ գնում։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պոստատար 6 ժամ 19 ր. առ., մարդատար-ապրանքատար՝ 6 ժ. 44 ր. երեկոյեան։

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ խառն գնացք 4-րդ կարգի վագոններով՝ 4 ժ. 48 ր. գիշերվայ։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։

Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—$9\frac{1}{2}$—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու. վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ,

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Օ. Վ. ԳԵՑԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԷԼ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց հիւ.։

Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—$1\frac{1}{2}$—2 ժ. ներքին և երեխայոց հ.

Յ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ—ատամնաբոյժ—$8\frac{1}{2}$—$11\frac{1}{2}$ ժ., պլօմբներ և արհեստական ատամներ։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Օ. Վ. ԳԵՑԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԷԼ—6—$6\frac{1}{2}$ ժ մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։

Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԻՒՈՐԳԲԷԳԵԱՆ

Աչքի հիւանդութիւններ

Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինօվսկայա փող № 8
(օ. մ.) 783. 100—60

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

Ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։

Ընդունելութիւն ամեն օր { 12—1 ժ. առաւ.
5—6 ժ. երեկ.

Միքայէլեան փող., № 36, տ. Ճաւճանիձէի։
(օ. մ.) 1216. 100—48

ԲԺԻՇԿ

Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ

Մասնագէտ սիֆիլիս, վեներական, միզասեռական և կաշուի հիւանդութիւնների։ Հիւանդների ընդունելութիւնը՝ առաւօտ. ժամը 9-ից մինչև 10-ը, երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը։

Կսէնիեվսկայա փ., № 6, «Վէտցէլ» հիւրանոցի մօտ։ (ե. հ. շ.) 955. 100—35

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

Ներքին և ջղային հիւանդութիւններ։

Ընդունելութիւնը
ամեն օր { առաւօտեան 9—12 ժ.
երեկոյեան 5—7 ժ.
Միքայէլեան փողոց, № 27.
(ա. օ.) 1087. 100—46

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւններ։

Ընդունելութիւնը
ամեն օր (առաւօտեան ժ. $12\frac{1}{2}$—2.
(երեկոյեան ժ. 5—7.
Կիրակի օրերը միայն առ. ժ. 11—$12\frac{1}{2}$.
Հասցէն՝ Սօլօլակ, Բէհբութեան փ., № 33.
(ա. օ.) 1044. 100—52

ՄԵԴԻՑԻՆԱՅԻ

ՖԵԼԴՇԷՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ

Յ. Գ. ԵՍԱՅԵԱՆ

Բժիշկների որոշմամբ կատարում է կաշուի տակ սրսկումներ, լուացումներ (спринцов.), վէրքի փաթաթումն, դեղերի քսումն (втиранie) այլն։ Էլեքտրականութիւն րէվմատիզմի, պարալիչի, սեռական անկարողութեան և թուլութեան դէմ։ Մասսաժ էլեքտրական գործիքով և ձեռքով. մասնաւոր և ընդհանուր մասսաժ։ Բժշկական մարմնամարզութիւն, ծաղկահատութիւն։ Օտարերկրեայ հիւանդներին ցոյց է տալիս մասնագէտ հմուտ բժիշկների։ Տալիս է այլ և այլ բժշկական-առողջապահական խորհուրդներ։ Կարելի է և գրաւոր, ներփակելով վարձատրութիւն ըստ կարողութեան։ Ընդունելութիւնը 3—4 ժամը։ Семеновская ул., № 9, Վորոնցովի կամուրջին մօտ։

(օ. մ.) 857. 0—38

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ

ՔԱՂՈՒԱԾՔ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՕՐԻՆԱԳՐՔԻՑ

XI հատորի II մասից
ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ
Արհեստական արդիւնագործ. մասին։
Գինը 60 կոպէկ։
Հասցէն՝ Тифлисъ, Ремесленная Управа.
(օ. մ.) 1349. 3—1

Արտասահմանից ստացվեցին առաջիկայ տօնական շնորհաւորութիւնների համար

ՊՕՍՏ ԿԱՐՏԷՐ

(Հրատ. Աղբիւր-Տարազի)

1. Վեհափառ Կաթողիկոսն իր շքախմբով։
2. Վեհափառը Անիի թանգարանում։
3. Վեհափառը Ներսիսեան դպրանոցի Նոր շէնութեան հիմքն է դնում։
4. Սգազգեստ Հայաստանի Ոգին։

Գինը ճանապարհածախսով 100 հատը 6 ր., 50 հատը 3 ր. 50 կ., 25 հատը 2 ր.։

Պատուէրները կատարվում են դրամն ստացված օրը։ Վերադիր վճարով պատուէր չէ ընդունվում։

Դիմել՝ Тифлисъ, „Бюро печати", Мадатовская № 5.
(ե.հ.կ) 1344. 5—3

ԲԱՑՎԱԾ Է 1910 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

XXVIII Տարի **ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶ** XXI Տարի

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐԻ

Հրատարակվում են ճոխ, բազմաբովանդակ, ժամանակցութեամբ մեր և եւրոպական ակնյայտնի գրականագէտների, հրապարակախօսների, լրագրողների, արուեստագէտների և գեղագէտների։

ԱԳԱՌԻԿ կամ մաս-մաս վճարող բաժանորդ չէ ընդունվում։

◆ Բաժանորդագրութեան պայմաններ ◆

1) ԱՂԲԻՒՐ դպրոցական աշակերտուհիների և աշակերտների համար տարեկան մէկ րուբլի (1 ր.)։

2) ԱՂԲԻՒՐ և ԱՂԲԻՒՐԻ ակունք ս. Սահակի, ս. Մեսրոպի և Միքայէլ Նալբանդեանի մեծադիր 3 պատկերներով տարեկան երկու րուբլի (2 ր.)։

3) ԱՂԲԻՒՐ դպրոցների, գրադարանների, հաստատութիւնների և հասակաւոր բաժանորդների համար 3 ր. (Արտասահման 5 ր)։

4) ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶ, Աղբիւրի Ակունք դպրոցական աշակերտի հասցէով, ընտանիքների համար, ՏԱՐԱԶԻ քսանամեակը լրացնելու և 21-րդ տարին թևակոխելու առիթով 10 րուբլուց իջեցնում ենք բաժանորդագինը 5 րուբլու։ Մինչև դեկտեմբերի 15-ը ստորագրվող բաժանորդներին ուղարկվեն և պրէմիաները՝ Վեհափառ Իզմիրլեանի բազմագոյն ձիթանկար և ս. Սահակի, ս. Մեսրոպի, Միքայէլ Նալբանդեանի մեծադիր 4 պատկերներն էլ։ Դեկտեմբերի 15-ից յետոյ բաժանորդագրվող աշակերտները վճարում են այդ պրէմիաների համար մէկ րուբլի, այսինքն փոխանակ հինգ րուբլու՝ վեց րուբլի։

ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ, Աղբիւրի Ակունք, յաւելուածներ և պրէմիաներ դպրոցների, հաստատութիւնների, գրադարանների և հասակաւոր բաժանորդների համար տարեկան 10 ր., արտասահման 18 կամ 50 ֆր.։

Հասցէն Тифлисъ, редакція „АГБЮРЪ" „ТАРАЗЪ". Tiflis (Caucase) Rédaction „AGBUR-TARAZ".

Խմբ.-հրատ. Տ. Նազարեան

(շ.ե.հ.) 1330. 3—3

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ

ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշւապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների մինիստրութեան ուսումնական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ անձանց, գործնական ձևով հաշւապահութիւն և ուրիշ մասնագ. առարկաներ 4 ամսվայ ընթացքում։

Կուրսերում բացի սովորական մասնագիտակ. առարկաներից աւանդվում են սեպտեմբեր ամսից օտար լեզուներ և սղագրութիւն (стенографія) ըստ ցանկութեան և որոշ վճարով։

Ընդունելութիւնն ամեն օր, ժամը 4-ից մինչև 7-ը երեկոյեան, 9-ից մինչև 10-ը առաւօտեան։ Պարապմունքները սկսվելու են 1910 թ. յունվարի 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։

Դասընթացքը աւարտողներին տրվում են, ֆինանսների մինիստրութեան Թոյլատրած ծրագրի համաձայն, ատտեստատներ։

Դրանից անկախ՝ բացված են քիչ պատրաստականութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թւաբանութեան համար։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում. Н. В. Абраамяну, Николаевская ул. № 22, Телефонъ № 744.

Վերևում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կ.։

(կ. ե. հ.) 1331. 13—3

ՆՈՐ ՏԱՐՈՒՆ ՁԵՐ ԲԱՂԴԸ ՓՈՐՁԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԴՐԷՔ 2 ՌՈՒԲԼԻ և դուք իրաւունք կը ստանաք մասնակցելու $^1/_{50}$ բաժնին յունվարի 2-ին 1910 թ. խաղացվելիք ՊԵՏԱԿԱՆ ԽԱՂԱՐԿՈՒԹԵԱՆ I ՓՈԽԱՌ. ՏՈՄՍԻ, որ խաղացվելու է Պետերբուրգի Պետական Բանկում։ Ծախսելով մի այդքան չնչին գումար՝ դուք կարող էք շահել 4000 ր. մի դրամագլուխ. հետևաբար՝ ձեզ հարկաւոր է օգտվել այդ առիթից և շուտով գրվել իբրև մասնակցող։ Ստանալով ձեր դրած գումարը՝ իսկոյն և եթ ձեզ կուղարկվի օրինաւոր վկայագիր, որի մէջ նշանակված կը լինեն տոմսի համարը և սէրիան։ Տարած գումարների ցուցակը կը տպվի թէ այս և թէ ուրիշ լրագիրներում։ Պատուէրները հասցէագրէք՝ Въ Контору Ш. Френзель, Варшава, Панская, 26. Հեռագրերի համար՝ Варшава, Френзель. Խաղարկութեան $^1/_{25}$ բաժնին մասնակցելու համար վճարը 4 ր., $^1/_{20}$-ին—5 ր., $^1/_{10}$-ին—10 ր.։

(4, 13, 15, 17, 19) (В. 76993) 1298. 5—4

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1910 Թ.

„ՍՈՒՐՀԱՆԴԱԿ"

(ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

Գրական, քաղաքական, հասարակական եւ առեւտրա-արդիւնաբերական
ԼՐԱԳԻՐ

Լոյս է տեսնում առժամանակ

ՇԱԲԱԹԸ ԵՐԵՔ ԱՆԳԱՄ

Չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը

Մօտիկ աշխատակցութեամբ Ղ. ԱՂԱՅԵԱՆԻ և ՆԱՐ-ԴՈՍԻ

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ» բաժանորդները կարող են ստանալ «ԽԱԹԱԲԱԼԱ» երգիծաբանական շաբաթաթերթը պակաս վճարով։

ԲԱԺՆԵՎՃԱՐՆ Է

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ (Առանձին)		ԽԱԹԱԲԱԼԱ (Առանձին)	
Տարեկան	7 —	Տարեկան Թիֆլիսում 4 ր., դուրսը 5 ր.։	
Կէս տարին	4 —	Կէս տ. » 2 ր., » 3 ր.։	
Երեք ամիսը	2 25	3 ամս. Թիֆլիսում և դուրսը	1 ր. 50 կ.։
Մէկ ամիսը	— 75	Մէկ ամիսը —	50 կ.։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ և ԽԱԹԱԲԱԼԱ
(Միասին)

Տարեկան	10 — —	Երեք ամիսը	3 — 50
Կէս տարին	6 — —	Մէկ ամիսը	1 — 20

«Սուրհանդակում» յայտարարութիւնների համար վճարում են տողին՝ առաջին երեսի վրա—10 կոպէկ, վերջին երեսի վրա—5 կոպէկ։

Հատով («Սուրհանդակի») համարն արժէ ամեն տեղ 5 կոպէկ։

Հասցէն Ռուսաստանի համար՝ Тифлисъ, редакція газ. „Сурандакъ". Արտասահմանի համար՝ Tiflis, Rédaction du journal „Sourhandak".

Հրատարակիչ՝ Գէորգ Ջիլինգարեան
Խմբագիր-հրատ. Աւս. Երիցեան
(հ. կ. ե.) 1348. 10—1

—○ ԿԱՇՈՒԵՂԷՆԻ ՊԱՀԵՍՏ ○—

Եղբ. ԵԱՐՂՈՒԼԵԱՆՑՆԵՐԻ

Թիֆլիս, Միջին փողոց, № 65.

Յայտնում ենք ի գիտութիւն յարգելի վաճառականների և հասարակութեան, որ մեր պահեստում ստացված են մեծ քանակութեամբ ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ (галоши) և ԿՐՆԿԻ ՌԵՏԻՆՆԵՐ, զանազան տեսակ ՇԵՎՐՕՆԵՐ, ԲՕՔՍԵՐ (խրոմ) ու ամեն տեսակ ԿԱՇՈՒԵՂԷՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ—Ռուսաստանի և արտասահմանի արդիւնաբերութիւն, նոյնպէս և կօշկակարների գործիքներ ու կօշկադեղեր յայտնի ֆիրմաների։ Ինչպէս կրկնակօշիկները, նոյնպէս և բոլոր ապրանքները ծախում ենք—մեծաքանակ (оптомъ) գնողներին գործարանային գներով, իսկ հատավաճառը (розничн. продажа) ամենաձեռնտու գներով։ Ունենք բաժանմունք ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, որտեղից նոյնպէս կարելի է ստանալ կաշուեղէն և գալանտերէյնի ապրանքներ ձեռնտու գներով։ Վարշավայի բաժ. հասցէն՝ Варшава, Лешно № 8, М. Н. Яргулову.

(կ. հ.) 938 30—27

Անդրկովկասեան ֆաբրիկային պահեստ

„ՊՐՕՎՕԴՆԻԿ"

1897 թ.

ПОСТАВЩИКЪ ДВОРА ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА

1888

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԹԻՖԼԻՍ, ՍՕԼՕԼԱԿՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, № 4.

ԱՌԱՋԻԿԱՅ ՏՕՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է.

ԱՍԲԷՍՏԻ ՁԱՅՐՎՈՂ ՁԻՒՆ ՏՕՆԱԾԱՌԻ ՀԱՄԱՐ.

ՌԷԶԻՆԻ ԽԱՂԱԼԻՔՆԵՐ.

Գալօշներ, տիկնիկներ եւ խաղագնդակներ.

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԸՆՏԻՐ ՍՓՌՈՑՆԵՐ

ՄՈՄԼԱԹԻՑ |կլեօնկա|

ԱՐՇԻՆՈՎ ԵՒ ՀԱՏՈՎ, ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՄԵԾՈՒԹԵԱՆ.

(հ. կ.) 1034. 0—4

Электропечатня Ав. Мугдусіакопова съ С-ми.
Большая Ванкская № 3.